«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Ապրիլ 2026թ.
ք. Երևան

Scanned with CamScanner

**Բովանդակություն**

| | |
|---|---|
| 3 | Անկախ աուդիտորի եզրակացություն |
| 6 | Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն |
| 7 | Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն |
| 8 | Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն |
| 9 | Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն |
| 10 | Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ |
| 11 | Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ |

---

| | |
|---|---|
| **Ընկերության գտնվելու վայրը՝** | Հայաստանի Հանրապետություն |
| **Իրավական ձևը՝** | Փակ Բաժնետիրական Ընկերություն |
| **Հիմնական գործունեության նկարագիրը՝** | Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում |
| **Գործադիր տնօրեն՝** | Արթուր Մկրտչյան |



Scanned with CamScanner

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Ներկայացվում է «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ խորհրդին*

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2025թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման էական քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներ) համաձայն:

**Կարծիքի հիմք**

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:



Scanned with CamScanner

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները անբավարար են, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության կողմից անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու դադարեցմանը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:



Scanned with CamScanner

BDO

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

15 ապրիլ 2026թ.

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Վահագն Սահակյան, FCCA

Տնօրեն

Մարիամ Ավետիսյան, FCCA

Առաջադրանքի Գործընկեր

Scanned with CamScanner

**«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ**
**Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն**
**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ**

| | | 2025թ. | 2024թ |
|---|---|---|---|
| | | հազար դրամ | հազար դրամ |
| Ապահովագրական գործունեությունից հասույթ | 6 | 7,482,409 | 4,039,404 |
| Ապահովագրական գործունեության ծախսեր | 7 | (5,625,207) | (2,974,546) |
| Զուտ վերապահովագրական ծախս | 8 | (273,054) | (192,518) |
| **Ապահովագրական գործունեության զուտ արդյունք** | | **1,584,148** | **872,340** |
| Տոկոսային եկամուտ ավանդներից | | 412,750 | 268,013 |
| Տոկոսային եկամուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից | | 85,250 | 80,489 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ օգուտ | | 53,215 | 20,137 |
| **Զուտ ներդրումային եկամուտ** | | **551,215** | **368,639** |
| Այլ եկամուտ ապահովագրական գործունեությունից | 9 | 304,778 | 215,484 |
| Արտարժույթի վերագնահատումից զուտ վնաս | | (5,839) | (5,123) |
| (Ծախս)/եկամուտ այլ պահուստների հակադարձումից | | (1,176) | 35,718 |
| Այլ ծախսեր | 10 | (1,524,399) | (1,068,280) |
| **Շահույթ նախքան հարկումը** | | **908,727** | **418,778** |
| Շահութահարկի գծով ծախս | 11 | (151,703) | (65,947) |
| **Տարվա շահույթ** | | **757,024** | **352,831** |
| | | | |
| Այլ համապարփակ արդյունք | | | |
| ***Հոդվածներ, որոնք երբեք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս*** | | | |
| Հիմնական միջոցների վերագնահատումից աճ | | 447,070 | - |
| Հարկի ազդեցություն | | (80,472) | - |
| **Ընդամենը այլ համապարփակ արդյունք առանց շահութահարկի** | | **366,598** | **-** |
| **Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք** | | **1,123,622** | **352,831** |

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված 6-ից 86 էջերում հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. ապրիլի 15-ին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Արթուր Մկրտչյան
Գործադիր տնօրեն

Ռոբերտ Մելիքյան
Գլխավոր հաշվապահ



Scanned with CamScanner

**«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ**
**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**
**2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա դրությամբ**

| | Ծնթ. | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|---|
| **Ակտիվներ** | | հազար դրամ | հազար դրամ |
| Դրամական միջոցներ | 12 | 91,110 | 97,530 |
| Բանկային ավանդներ | 13 | 4,269,229 | 3,643,724 |
| Տրամադրված փոխառություններ | 14 | 319,590 | 7,795 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 15 | 1,581,347 | 936,408 |
| Ապահովագրական պայմանագրերի գծով ակտիվ | 16 | 18,359 | - |
| Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվ | 17 | 224,562 | 76,126 |
| Այլ ակտիվներ | 18 | 221,010 | 114,585 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 19 | 776,270 | 347,012 |
| **Ընդամենը ակտիվներ** | | **7,501,477** | **5,223,180** |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | | |
| **Պարտավորություններ** | | | |
| Ապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություն | 16 | 3,405,928 | 2,438,704 |
| Վերաապահովագրական պայմանագրերի գծով պարտավորություն | 17 | 27,649 | 35,946 |
| Այլ պարտավորություններ | 20 | 458,197 | 384,211 |
| Շահութահարկի գծով պարտավորություն | | 81,296 | - |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 11 | 109,096 | 15,890 |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **4,082,166** | **2,874,751** |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Բաժնետիրական կապիտալ | 21 | 3,030,000 | 3,030,000 |
| Վերագնահատման պահուստ | 21 | 366,598 | - |
| Կուտակված շահույթ/(վնաս) | 21 | 22,713 | (681,571) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **3,419,311** | **2,348,429** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **7,501,477** | **5,223,180** |

Scanned with CamScanner

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| **Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Ապահովագրության գծով ստացված ապահովագրավճարներ | 8,389,691 | 5,139,459 |
| Վերաապահովագրության գծով զուտ ելքեր | (429,788) | (161,050) |
| Վճարված պահանջներ և հատուցումներ | (4,008,277) | (2,110,703) |
| Վճարված ձեռքբերման ծախսումներ | (1,580,798) | (878,216) |
| Սուբրոգացիաներ և վերականգնումներ | 56,284 | 37,420 |
| Այլ ապահովագրական ծախսեր | (727,312) | (440,376) |
| Վարչական ծախսեր | (613,581) | (394,052) |
| **Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր** | **1,086,219** | **1,192,482** |
| **Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ստացված տոկոսային եկամուտ | 422,822 | 282,501 |
| Բանկային ավանդների ներգրավումից ելքեր | (3,461,500) | (2,881,000) |
| Բանկային ավանդների ստացումից մուտքեր | 2,907,330 | 1,617,200 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների ձեռքբերումից ելքեր | (714,091) | (197,483) |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վաճառքից/մարումից մուտքեր | 107,748 | 120,000 |
| Տրամադրած փոխառություններից ելքեր | (300,000) | - |
| **Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական հոսքեր** | **(1,037,691)** | **(1,058,782)** |
| **Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից** | | |
| Վճարված շահաբաժիններ | (52,740) | (52,740) |
| **Ֆինանսավորման գործունեությամբ օգտագործված զուտ դրամական հոսքեր** | **(52,740)** | **(52,740)** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ** | **(4,212)** | **80,960** |
| Փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա | (2,208) | (2,797) |
| Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ | 97,530 | 19,367 |
| Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ | **91,110** | **97,530** |



Scanned with CamScanner

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

| | Բաժնետիրական կապիտալ | Կուտակված շահույթ/(վնաս) | Վերագնահատման պահուստ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| **Մնացորդն առ 1 հունվար 2024թ.** | 3,030,000 | (981,662) | - | 2,048,338 |
| **Ընդամենը համապարփակ արդյունք** | | | | - |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ | - | 352,831 | - | 352,831 |
| Շահաբաժիններ արտոնյալ բաժնետերերին | - | (52,740) | - | (52,740) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2024թ.** | **3,030,000** | **(681,571)** | **-** | **2,348,429** |
| **Մնացորդն առ 1 հունվար 2025թ.** | **3,030,000** | **(681,571)** | **-** | **2,348,429** |
| **Ընդամենը համապարփակ արդյունք** | | | | - |
| Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ | - | 757,024 | - | 757,024 |
| Շահաբաժիններ արտոնյալ բաժնետերերին | - | (52,740) | - | (52,740) |
| Հիմնական միջոցների վերագնահատումից աճ | - | - | 447,070 | 447,070 |
| Հիմնական միջոցների վերագնահատման գծով հարկի ազդեցություն | - | - | (80,472) | (80,472) |
| **Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2025թ.** | **3,030,000** | **22,713** | **366,598** | **3,419,311** |



Scanned with CamScanner

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ ........ 11
2. Պատրաստման հիմունքներ ........ 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ ........ 15
4. Ֆինանսական գործիքներ ........ 19
5. Ապահովագրության ռիսկի կառավարում ........ 22
6. Ապահովագրական գործունեությունից հասույթ ........ 31
7. Ապահովագրական գործունեության ծախսեր ........ 32
8. Զուտ վերաապահովագրական ծախս ........ 33
9. Այլ եկամուտ ապահովագրական գործունեությունից ........ 34
10. Այլ ծախսեր ........ 34
11. Շահութահարկի գծով ծախս ........ 34
12. Դրամական միջոցներ ........ 37
13. Բանկային ավանդներ ........ 37
14. Տրամադրված փոխառություններ ........ 37
15. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ ........ 38
16. Ապահովագրական պայմանագրերի մասով ակտիվ/(պարտավորություն) ........ 39
17. Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվ/(պարտավորություն) ........ 51
18. Այլ ակտիվներ ........ 59
19. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների ........ 60
20. Այլ պարտավորություններ ........ 61
21. Սեփական կապիտալ ........ 61
22. Կապիտալի կառավարում ........ 62
23. Պայմանական դեպքեր ........ 63
24. Գործարքներ կապակցված կողմերի հետ ........ 64
25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը ........ 66



Scanned with CamScanner

**1. Ընդհանուր տեղեկություններ**

«ՌԵՍՕ» Ապահովագրական ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է որպես փակ բաժնետիրական ընկերություն 2008թ-ին Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության գործունեությունը կարգավորում են ՀՀ կենտրոնական բանկը («ՀՀ ԿԲ») և Հայաստանի ավտոապահովագրողների բյուրոն: 2022թ.-ի հոկտեմբերի 18-ին ՀՀ ԿԲ-ի կողմից գրանցվել է Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որով սահմանվել է Ընկերության անվանափոխությունը «ՌԵՍՕ» Ապահովագրական ՓԲԸ-ից «ՌԵԳՌ» Ապահովագրական ՓԲԸ՝ համաձայն 2022թ-ի սեպտեմբերի 12-ի Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովի: Այնուհետև, 2023թ. փետրվարի 6-ին գրանցվել է Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որով Ընկերությունը վերանվանվել է «ՌԵԳՌ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի 91 լրիվ դրույքով աշխատող և 102 գործակալ (2024թ-ին՝ 79 լրիվ դրույքով աշխատող և 108 գործակալ):

Համաձայն վերոնշյալ բաժնետերերի արտահերթ ժողովի՝ Ընկերության միակ բաժնետերն է «Պոլիգրաֆիա» ՓԲԸ-ն (100%):

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 24-ում:

***Հիմնական գործունեությունը***: Ընկերության հիմնական գործունեությունն է ապահովագրական ծառայությունների մատուցումը, որը կարգավորվում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով: Ընկերությունն ունի ոչ կյանքի ապահովագրության 13 (տասներեք) ապահովագրական դասերով գործունեության իրականացման լիցենզիա:

***Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը:*** Հայաստանի Հանրապետությունում Ընկերությունը գործունեությունն իրականացնում է իր գլխամասային գրասենյակի և գործակալների ցանցի միջոցով: Գլխամասային գրասենյակի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0014, Կոմիտասի պող. 62 շենք 93-93/1 տարածք:

***Գործառնական միջավայրը:*** Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2025–2026 թվականներին Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական իրավիճակը սրվեց՝ կապված ԱՄՆ-ի, Իսրայելի, Իրանի և նրանց տարածաշրջանային դաշնակիցների միջև ռազմական լարվածության աճի հետ: Այս զարգացումները մեծացրել են տարածաշրջանային անորոշությունը, նպաստել էներգետիկ շուկաների տատանողականությանը և բարձրացրել միջազգային փոխադրումների և առևտրի ուղիների խաթարման ռիսկերը:

Հայաստանի՝ Իրանի հետ աշխարհագրական մոտիկության և Ադրբեջանի հետ շարունակվող լարվածության պայմաններում վերոնշյալ զարգացումները հանգեցրել են տարածաշրջանում աշխարհաքաղաքական ռիսկերի աճին: Չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի տարածքում անմիջական ռազմական գործողություններ չեն իրականացվել, սահմանների մոտ անկայունությունը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսական պայմանների, սահմանային առևտրի, մատակարարման շղթաների և ներդրումային ակտիվության վրա:

Բացի այդ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը նպաստում է ավելի լայն տարածաշրջանային միջավայրում անորոշության պահպանմանը:



Scanned with CamScanner

Ռուսաստանի Դաշնության տնտեսական ակտիվությունը զգալի ազդեցություն ունի Հայաստանի տնտեսության վրա՝ պայմանավորված զգալի ֆինանսական հոսքերով, ներառյալ դրամական փոխանցումները: Հետևաբար, Ռուսաստանի նկատմամբ քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, շուկաների անկայունությունը, գնաճային ճնշումները և այլ ռիսկեր կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի տնտեսական հեռանկարների վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է կայունություն գլոբալ անկայունության պայմաններում՝ գրանցելով բարձր մակրոտնտեսական ցուցանիշներ ինչպես 2024, այնպես էլ 2025 թվականներին: Աճը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության աճով, ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան և դրամական փոխանցումների զգալի ավելացմամբ: Արդյունքում, 2025 թվականի հունվար–դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմել է 7.1%: Կառավարության 2021–2026 թվականների տնտեսական ծրագիրը միտված է արտահանման վրա հիմնված և ներդրումներով պայմանավորված աճի մոդելի զարգացմանը՝ լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այս միջավայրը էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ղեկավարությունը իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու գործունեության կայունությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների անկանխատեսելի բնույթը, ղեկավարությունը չի կարող վստահորեն գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը Ընկերության ապագա ֆինանսական արդյունքների և վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ղեկավարության գնահատականը Հայաստանի գործարար միջավայրի և դրա ազդեցության վերաբերյալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ապագա զարգացումները կարող են տարբերվել այս գնահատականներից:

**2. Պատրաստման հիմունքներ**

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 25-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն՝ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

*Չափման հիմքերը*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:



Scanned with CamScanner

**Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն (Վերագնահատման մոդել)**

2025 թվականին Ընկերությունը փոփոխել է հիմնական միջոցների «Շենքեր» դասի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ անցնելով սկզբնական արժեքի մոդելից վերագնահատման մոդելի:

Տվյալ փոփոխությունը կրում է կամավոր բնույթ և նպատակ ունի ապահովել ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների համար ավելի արժանահավատ և համապատասխան տեղեկատվության ներկայացում:

Սկզբնական արժեքի ճշգրտումը հաշվառվել է որպես վերագնահատում համաձայն ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ» և ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» ստանդարտների: Ընկերությունը «Շենքեր» դասի համար քաղականության փոփոխությունը կիրառել է առաջընթաց:

***Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ***

***ա) 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ***

***Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)***

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ):

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

  2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

***(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանությունները և փոփոխությունները***

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

*Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար:*

- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՖՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)



Scanned with CamScanner

- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)։

*Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.*

***ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում***

- «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՍ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ին և պարտադիր բնույթ է կրում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար։ ՖՀՄՍ 18-ը, որը հրապարակվել է ՀՀՄՍԽ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 9-ին, սահմանում է զգալի նոր պահանջներ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա.

- Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, ներառյալ պահանջները պարտադիր ենթագումարների համար, որոնք պետք է ներկայացվեն։ ՖՀՄՍ 18-ը ներկայացնում է պահանջներ եկամուտների և ծախսերի հոդվածների համար, որոնք պետք է դասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հինգ կատեգորիաներից մեկում։ Այս դասակարգման արդյունքում ներկայացվում են որոշակի ենթագումարներ, օրինակ՝ գործառնական կատեգորիայի բոլոր եկամուտների և ծախսերի հոդվածների հանրագումարը, ներառյալ «գործառնական շահույթի կամ վնասի» նոր պարտադիր ենթագումարը։

- Տեղեկատվության համախմբում և տարանջատում, ներառյալ ընդհանուր սկզբունքների ներդրումը, թե ինչպես պետք է տեղեկատվությունը համախմբվի և տարանջատվի ֆինանսական հաշվետվություններում։

- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչներին (MPM) առնչվող բացահայտումներ, որոնք ֆինանսական կատարողականի չափումներ են՝ հիմնված ՖՀՄՍ-ներով պահանջվող ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի վրա համապատասխան ճշգրտումներով (օրինակ՝ «ճշգրտված շահույթ կամ վնաս»)։ Կազմակերպություններից կպահանջվի բացահայտել MPM-ն իրենց ֆինանսական հաշվետվություններում, ներառյալ MPM-ի համադրումը ՖՀՄՍ-ի ստանդարտներին համապատասխան հաշվարկված մոտակա ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի հետ։ ՖՀՄՍ 18-ի նպատակն է բարելավել ընկերությունների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների համեմատելիությունը և թափանցիկությունը։ ՖՀՄՍ 18-ը նաև հանգեցրել է չնչին փոփոխություններին դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում։

***ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ***

2024 թվականի մայիսի 9-ին ՀՀՄՍԽ-ը հրապարակեց ՖՀՄՍ 19-ը՝ «Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. բացահայտումներ»։ Շահագրգիռ կողմերը դիմել էին ՀՀՄՍԽ՝ խնդրելով թույլատրել դուստր կազմակերպությանը, որը հաշվետու է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում ՖՀՄՍ կիրառող մայր կազմակերպության առջև, կիրառել ՖՀՄՍ-ներն իր սեփական ֆինանսական հաշվետվություններում բացահայտման նվազեցված պահանջներով։ Ելնելով այս դիմումից՝ ՀՀՄՍԽ-ը իր հետազոտական պորտֆելում ավելացրեց մի նախագիծ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության դուստր ընկերությունների համար բացահայտման նվազեցված պահանջներ ապահովելու վերաբերյալ։ Նախագիծն ավարտվեց ՖՀՄՍ 19-ի թողարկմամբ, որը համապատասխան դուստր ընկերություններին թույլ է տալիս կիրառել բացահայտման նվազեցված պահանջներ՝ միաժամանակ կիրառելով ճանաչման, չափման և ներկայացման պահանջները։ Օրինակ, ՖՀՄՍ 19-ի համաձայն, կազմակերպությունը, որն ունի գործարքներ ՖՀՄՍ 2-ի /Բաժնետոմսերի վրա



Scanned with CamScanner

հիմնված վճարումներ/ շրջանակներում, չի կիրառի ՖՀՄՍ 2.44-52-ի բացահայտման պահանջները, որոնք շատ ընդարձակ են: Փոխարենը, կազմակերպությունը պետք է բացահայտի միայն ՖՀՄՍ 19-ի 31-34-րդ պարագրաֆների տեղեկատվությունը, որը ներառում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման պայմանավորվածությունների նկարագրությունը, բաժնետոմսերի օպցիոնների չափը և իրագործման միջին կշռված արժեքները, կազմակերպության՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների իրական արժեքը չափելու կարգը, ինչպես նաև ՖՀՄՍ 2-ի շրջանակներում գործարքների վերաբերյալ այլ ընդհանուր տեղեկությունները:

Բացահայտման պահանջների կրճատման աստիճանը պատկերացնելու համար պետք է նշել, որ ՖՀՄՍ 2-ի՝ բացահայտման պահանջներին վերաբերող հատվածը ներկայումս պարունակում է 991 բառ, մինչդեռ ՖՀՄՍ 19-ը պարունակում է ընդամենը 250 բառ՝ կապված ՖՀՄՍ 2-ի համաձայն տեղեկատվության բացահայտման հետ: ՖՀՄՍ 19-ի պահանջներին համապատասխանելու չափանիշները հետևյալն են.

- Կազմակերպությունը դուստր ընկերություն է հանդիսանում (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10-ի /Համախմբված ֆինանսական հաշվետվություններ/ Հավելված Ա-ում),
- Կազմակերպությունը չունի հանրային հաշվետվողականություն, և
- Կազմակերպությունն ունի վերջնական կամ միջանկյալ մայր ընկերություն, որը հրապարակում է հանրային օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: Կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն, եթե.
- նրա պարտքային կամ բաժնային գործիքները շրջանառվում են բաց շուկայում, կամ այն գտնվում է բաց շուկայում շրջանառելու համար այդպիսի գործիքներ թողարկելու գործընթացում, կամ
- այն ֆիդուցիար պարտականությունների շրջանակում պահում է ակտիվներ արտաքին կողմերի լայն խմբերի համար՝ որպես իր հիմնական գործունեություններից մեկը:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի ակնկալում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը չի ակնկալում, որ ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

### 3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

***<u>Գնահատումներ և ենթադրություններ</u>***

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված այն դատողությունների վերաբերյալ տեղեկատվութունը, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է հետևյալ ծանոթագրությունում.



Scanned with CamScanner

- գնահատում, թե արդյոք Ընկերության գործունեությունն առավելապես կապված է ապահովագրության հետ: Գնահատման նկարագիրը ներկայացված է ստորև այս Ծանոթագրությունում:

*Պորտֆելների առանձնացում.* Կազմակերպությունը պորտֆելներով առանձնացնում է ապահովագրության պայմանագրեր, որոնք ենթակա են միանման ռիսկերի և կառավարվում են միասին: Վերոնշյալ պորտֆելների բաժանման ժամանակ, կազմակերպությունը կիրառում է առկա պայմանագրերի և գործընկերների մասին տեղեկատվությունը, կազմակերպության գործունեության պատմական տվյալները, ինչպես նաև շուկայական տեղեկատվությունը: Նման առանձնացումը պահանջում է գնահատումների իրականացում: Նոր թողարկված պայմանագրերի պորտֆելների բաժանման չափանիշների սահմանումը կատարվում է կազմակերպության ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ հիմնվելով՝ կազմակերպության ներքին հաշվետվողականության և արտաքին տեղեկատվությունների վրա: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է իր գնահատումները:

*Ապահովագրական պայմանագրերի խմբերի բաժանում.* Կազմակերպությունը թողարկված ապահովագրության պայմանագրերի պորտֆելները բաժանում է հետևյալ խմբերի.

ա) պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ են, եթե այդպիսիք առկա են,

բ) պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ դրանք հետագայում կդառնան անբարենպաստ, եթե այդպիսիք առկա են, և

գ) պորտֆելի մնացած պայմանագրերի խումբ, եթե այդպիսիք առկա են:

Խմբերի բաժանման ժամանակ կատարվում են գնահատումներ: Կազմակերպությունը պարբերաբար վերանայում է խմբերի բաժանման չափանիշները՝ պատմական տեղեկատվության և ինչպես նաև գործունեության և շուկայական տվյալների փոփոխությանը համապատասխան:

*Ուղղակի վերագրելի դրամական հոսքերի գնահատումներ.* Կազմակեպությունը իրականացնում է գնահատումներ՝ թե արդյոք դրամական հոսքերը ուղղակի վերագրելի են ապահովագրական պայմանագրերին, թե ոչ:

*Ոչ ֆինանսական ռիսկի գծով ճշգրտում.* Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտումն այն փոխհատուցումն է, որը Ընկերությունը պահանջում է ապահովագրության պայմանագրերի խմբերի դրամական հոսքերի մեծության և ժամկետների անորոշություններով պայմանավորված ոչ ֆինանսական ռիսկը կրելու համար: Ռիսկի ճշգրտումն արտացոլում է այն գումարը, որը ապահովագրողը խելամիտ կերպով կվճարեր՝ վերացնելու անորոշությունը, որ ապագա դրամական հոսքերը կգերազանցեն ակնկալվող արժեքի գումարը:

*Ենթադրությունների որոշման գործընթացը*

Ակնկալվում է, որ ապահովագրության գծով ակտիվների և պարտավորությունների գնահատման համար օգտագործվող ենթադրությունները կհանգեցնեն այնպիսի պահուստների ձևավորմանը, որոնք բավարար կլինեն ապահովագրության պայմանագրերի գծով առաջացող պարտավորությունները կատարելու համար՝ այնքանով, որքանով դրանք հնարավոր է կանխատեսել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով չկարգավորված պահանջների գծով պահուստի ձևավորման հետ կապված անորոշությունը, հավանական է, որ վերջնական արդյունքը կտարբերվի նախապես որոշված պարտավորություններից:



Scanned with CamScanner

Պահուստը ձևավորվում է հաշվետու ամսաթվի դրությամբ՝ այդ ամսաթվի դրությամբ տեղի ունեցած պատահարների բոլոր պահանջների (լինեն դրանք ներկայացված, թե՝ ոչ) կարգավորման համար պահանջվող վերջնական ծախսի համար, ներառյալ պահանջների կարգավորման արտաքին ծախսերը՝ հանած արդեն իսկ վճարված գումարները:

Որպես ենթադրությունների ելակետային տվյալներ սովորաբար օգտագործվում են Ընկերության ներքին աղբյուրների տվյալները, որոնց գծով առնվազն տարին մեկ անգամ մանրամասն ուսումնասիրություններ են իրականացվում: Ենթադրությունները ստուգվում են դիտարկելի շուկայական տեղեկատվության կամ այլ հրապարակված տեղեկատվության հետ դրանց համապատասխանությունն ապահովելու համար:

Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների գնահատումը, որպես կանոն, ենթադրում է ավելի մեծ անորոշություն, քան արդեն իսկ ներկայացված պահանջների գնահատումը, երբ առկա է ավելի մեծ ծավալով տեղեկատվություն: Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջները հաճախ հայտնի են դառնում Ընկերությանը պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո որոշ ժամանակ անց: Ընկերության պորտֆելի կարճաժամկետ բնույթի պատճառով, պահանջների բավականին մեծ մասը կարգավորվում է պահանջի համար հիմք ծառայող պատահարի տեղի ունենալուց հետո մեկ տարվա ընթացքում:

Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջները հաշվարկելու համար Ընկերությունը կիրառում է ակտուարային մեթոդներ: Տեղի ունեցած, սակայն դեռ չներկայացված պահանջների գծով պահուստը հաշվարկելու համար կիրառվող մեթոդները ներառում են այնպիսի ակտուարային մեթոդներ, ինչպիսիք են աստիճանային շղթայական մեթոդը, կամ որոշ դեպքերում՝ ակնկալվող վնասի հարաբերակցության մեթոդը, որը կիրառվում է հիմնավոր գնահատումներ ապահովելու համար, այն դեպքերում, երբ վիճակագրական մեթոդը կիրառելի չէ: Ակտուարները գնահատումներն իրականացնում են օգտագործելով պահանջների վճարումներին, ներկայացված պահանջների քանակությանը և դեպքերի գծով պահուստներին վերաբերող տեղեկատվությունը (մանրամասները ներկայացված են ստորև):

Չկարգավորված պահանջները գնահատելու համար կիրառվում է աստիճանային շղթայական և Բրաուն Ֆերգյուսոնի մեթոդները՝ բազմաթիվ ենթադրությունների համակցությամբ: Այս մեթոդները հիմնվում են նախորդ տարիների պահանջների փոփոխությունների վրա (վճարումների փոփոխություն և/կամ պահանջների գումարի փոփոխություն, պահանջների թվի փոփոխություն և այլն), ինչը թույլ է տալիս գնահատել ներկայումս առկա և ապագա պահանջների ակնկալվող փոփոխությունները: Այս մեթոդների կիրառումը հիմնականում նպատակահարմար է միայն պատահարի տեղի ունենալուց կամ պայմանագիրը կնքելուց հետո բավական ժամանակ անց, երբ առկա կլինի բավարար տեղեկատվություն այդ պահին գործող պահանջների վերաբերյալ՝ ընդհանուր ակնկալվող պահանջները գնահատելու համար:

Գործունեության բոլոր ոլորտներին, բացառությամբ ԱՊՊԱ-ին վերաբերող խոշոր պահանջները որպես կանոն գնահատվում են առանձին և չափվում են առանձին դեպքերի հիմունքով, կամ կանխատեսվում են առանձին՝ այս խոշոր պահանջների փոփոխությունների և գործողության ոլորտի հետ կապված հնարավոր խեղաթյուրված հետևանքները հաշիվ առնելու համար: ԱՊՊԱ-ի համար ներկայացված, սակայն դեռ չկարգավորված պահանջների պահուստը գնահատվում է միջին արժեքի մեթոդով՝ պահանջների յուրաքանչյուր դասի համար:

Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստները և չկարգավորված պահանջների պահուստները սկզբնապես գնահատվում են համախառն հիմունքով, և իրականացվում է առանձին հաշվարկ վերաապահովագրության փոխհատուցումների չափը որոշելու համար:



Scanned with CamScanner

**Զգայնության վերլուծություն**

Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գործունեության կարճաժամկետ բնույթի պատճառով, Ընկերության պորտֆելը զգայունություն է ցուցաբերում հիմնականում ակնկալվող վնասի հարաբերակցության և ակնկալվող պահանջների միջին գումարի փոփոխության նկատմամբ: Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է ապահովագրական սակագները, հիմք ընդունելով այս փոփոխականների վերջին փոփոխությունները՝ վերջին միտումները հաշվի առնելու համար:

Ղեկավարությունը գտնում է, որ ակնկալվող վնասի գործակցի և ակնկալվող պահանջների միջին գումարի ողջամիտ փոփոխությունն էական ազդեցություն չէր ունենա ապահովագրության պայմանագրերի գծով պահուստների վրա:

***Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ***

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է (ի տարբերություն դրա գոյատևման ժամկետի): Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվությունները կարող են լինել էականորեն տարբեր:

***Իրական արժեքի չափում***

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ զեղչման ազդեցությունը աննշան է:

Ընկերությունը հիմնական միջոցների «Շենքեր» դասը հաշվառում է վերագնահատված արժեքով: Վերագնահատված արժեքով հաշվառվող շենքերի իրական արժեքի մանրամասները տես ծանոթագրություն 19-ում:



Scanned with CamScanner

**4. Ֆինանսական գործիքներ**

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել ֆինանսական ռիսկերի, որոնց կառավարումը հիմնարար նշանակություն ունի ապահովագրական գործունեության համար և կազմում է գործառնությունների կենսական տարրը: Արժութային, տոկոսադրույքի, պարտատոմսերի գների հետ կապված ռիսկերը, ինչպես նաև պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկն այն հիմնական ռիսկերն են, որոնց ենթարկվում է Ընկերությունը:

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ընկերության Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի համար: Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման ու վերահսկման ընթացակարգերի մշակման և ներդրման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

***Շուկայական ռիսկ***

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

***Տոկոսադրույքի ռիսկ***

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են Ընկերության տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները և դրանց համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների մինչև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:



Scanned with CamScanner

| հազար դրամ | 31 դեկտեմբերի 2025թ. Հաշվեկշռային արժեք | 31 դեկտեմբերի 2025թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք | 31 դեկտեմբերի 2024թ. Հաշվեկշռային արժեք | 31 դեկտեմբերի 2024թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **Տոկոսակիր ակտիվներ** | | | | |
| *Բանկային ավանդներ* | | | | |
| - ՀՀ դրամով | 4,269,229 | 10.00% | 3,643,724 | 10.00% |
| *Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ* | | | | |
| - ՀՀ դրամով | 1,475,829 | 7.61% | 825,559 | 8.00% |
| - ԱՄՆ դոլարով | 105,519 | 5.37% | 110,849 | 7.15% |
| *Տրամադրված փոխառություններ* | | | | |
| - ՀՀ դրամով | 319,590 | 12% | 7,795 | 0% |

Տոկոսադրույքի ռիսկը Ընկերության եկամտի կամ ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է տոկոսադրույքների փոփոխության արդյունքում: Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է, երբ որոշակի ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող ակտիվներն ավելի կամ պակաս են նույն ժամկետայնությամբ փաստացի կամ կանխատեսվող պարտավորություններից:

Ստորև ներկայացվում է Ընկերության զուտ շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը՝ պայմանավորված տոկոսադրույքների փոփոխության հետևանքով շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությամբ, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների դիրքերի և 100 բազիսային կետով (բկ) եկամտաբերության կորերի զուգահեռ նվազման կամ աճի պարզեցված սցենարի հիման վրա:

| | 2025թ. հազար դրամ | 2024թ. հազար դրամ |
|---|---|---|
| 100 բկ զուգահեռ աճ | (45,539) | (9,364) |
| 100 բկ զուգահեռ նվազում | 38,686 | 9,364 |

*Արժութային ռիսկ*

Ընկերությունն ունի ԱՄՆ դոլարով արտահայտված ակտիվներ, որոնց մասով կրում է արտարժութային ռիսկ: Ստորև ներկայացնում է ֆինանսական ակտիվների կառուցվածքը 2025 և 2024թթ.-ի. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 31.12.2025թ հազար դրամ | 31.12.2024թ հազար դրամ |
|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 105,519 | 110,849 |
| | 105,519 | 110,849 |



Scanned with CamScanner

Ստորև ներկայացվում է արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների նկատմամբ Ընկերության շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայնության վերլուծությունը, որն իրականացվել է 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա դիրքերի և ևՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% փոփոխության պարզեցված սցենարի հիման վրա:

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% աճ ՀՀ դրամի նկատմամբ | 10,552 | 11,085 |
| ԱՄՆ դոլարի փոխարժեքի 10% նվազում ՀՀ դրամի նկատմամբ | (10,552) | (11,085) |

*Պարտքային ռիսկ*

Բանկային ավանդները, ընթացիկ հաշիվները, ապահովագրության և վերաապահովագրության գծով դեբիտորական պարտքերը և տրամադրված փոխառությունները ենթարկվում են պարտքային ռիսկի: Պարտքային ռիսկը հնարավոր վնաս կրելու ռիսկն է պայմանագրային կողմի կողմից իր պարտավորությունները կատարելու անկարողության պատճառով:

Ընկերությունը վերաապահովագրում է որոշ ռիսկեր վերաապահովագրական ընկերություններում: Վերաապահովագրական ընկերություն ընտրելիս հաշվի է առնվում վերջինիս վճարունակությունը և հուսալիությունը և պակաս չափով՝ ռիսկի բաշխումը (ռիսկի տարածումը պայմանագրային կողմերի միջև):

Ընկերությունն ունի նաև այլ դեբիտորական պարտքերի մնացորդներ, որոնք կարող են ենթարկվել պարտքային ռիսկի: Այս դեբիտորական պարտքերից ամենաէականները գործակալներից ստացվելիք գումարներն ու ստացվելիք ապահովագրավճարներն են: Ապահովադիրներից գումարները չստանալու ռիսկը նվազեցնելու համար ապահովագրության պայմանագրում ներառվում է դրույթ, համաձայն որի ապահովագրության պայմանագիրը չեղյալ է հայտարարվում ապահովագրավճարը սահմանված ամսաթվին չվճարելու դեպքում:

Բանկային ավանդների հետ կապված պարտքային ռիսկը նվազեցնելու համար Ընկերությունը կատարում է տարաբնույթ տեղաբաշխումներ և ներդրումներ է կատարում հիմնականում Հայաստանի այն բանկերում, որոնց վճարունակությունը ղեկավարության կողմից գնահատվում է որպես բարձր:

Ընկերությունը կառավարում է պարտքային ռիսկը գնելով միայն պետական արժեթղթեր:

Ընկերությունը ունի տրամադրված փոխառություններ ՀՀ ֆինանսական կազմակերպությանը, որի մասով ռիսկը կառավարվում է գործընկերոջ վճարունակության պարբերական վերլուծություն կատարելով: Այդ ներդրումները կարճաժամկետ բնույթ ունեն և ընդհանուր ներդրումային պորտֆելի փոքր մասն են կազմում:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը որպես կանոն արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:



Scanned with CamScanner

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Դրամական միջոցներ | 91,110 | 97,530 |
| Բանկային ավանդներ | 4,269,229 | 3,643,724 |
| Տրամադրված փոխառություններ | 319,590 | 7,795 |
| Այլ ակտիվներ | 28,023 | 19,404 |
| | 4,707,952 | 3,768,453 |

*Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կարող է ունենալ դժվարություններ իր ֆինանսական պարտավորությունները կատարելիս:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Ընկերության իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են Ընկերության ֆինանսական պարտավորությունները՝ ըստ դրանց պայմանագրային չզեղչված դրամական հոսքերի և մարման ժամկետների:

| 31.12.2025թ | | 31.12.2024թ | |
|---|---|---|---|
| Մինչև 30 օր | 30 օրից 6 ամիս | Մինչև 30 օր | 30 օրից 6 ամիս |
| հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| 181,270 | 12,840 | 202,337 | 11,880 |

**Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեք**

Ընկերությունը գտնում է, որ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքներն էականորեն չեն տարբերվում վերջիններիս հաշվեկշռային արժեքներից՝ պայմանավորված դրանց կարճաժամկետ բնույթով:

**5. Ապահովագրության ռիսկի կառավարում**

**Ռիսկի կառավարման նպատակները և ապահովագրական ռիսկի նվազեցման քաղաքականությունը**

Ընկերության կողմից իրականացվող հիմնական ապահովագրական գործունեությունը ենթադրում է վնաս կրելու ռիսկ անհատների և կազմակերպությունների հետ իրականացվող գործառնություններից, որոնք ուղղակիորեն ենթարկվում են ռիսկին: Նման ռիսկերը կարող են վերաբերվել գույքին, պարտավորություններին, դժբախտ պատահարներին, առողջությանը, բեռնափոխադրումներին և այլ վտանգներին, որոնք կարող են առաջանալ ապահովագրվող պատահարից: Արդյունքում, Ընկերության համար ռիսկի գործոն է հանդիսանում ապահովագրության պայմանագրի պահանջների ժամկետների և բարդության հետ կապված անորոշությունը: Հիմնական ռիսկը կայանում է նրանում, որ պահանջների հաճախականությունը և բարդությունը կարող է նախատեսվածից ավելի մեծ լինել:



Scanned with CamScanner

Ապահովագրվող պատահարներն իրենց բնույթով հազվադեպ են, և մեկ տարվա ընթացքում պատահարների փաստացի քանակը և չափը կարող է տարբերվել ընդունված վիճակագրական մեթոդով գնահատվածներից:

Ընկերությունն ապահովագրական ռիսկը կառավարում է ընդունված վիճակագրական մեթոդների, ռիսկերի կենտրոնացման վերաապահովագրման, անդերրայթինգի սահմանաչափերի, գործառնությունների հաստատման ընթացակարգերի, գնորոշման ուղեցույցների և առաջացող խնդիրների վերահսկման միջոցով:

*(ա) Անդերրայթինգի ռազմավարություն*

Ընկերության անդերրայթինգի ռազմավարության նպատակը տարբերակված պորտֆելի ապահովումն է, որի արդյունքում Ընկերության պորտֆելը ցանկացած պահի կներառի ոչ փոխկապակցվող ռիսկերի բազմաթիվ դասեր, և ռիսկի յուրաքանչյուր դասը, իր հերթին, անդրադարձ կգտնի մեծ թվով ապահովագրության պայմանագրերում: Ղեկավարությունը գտնում է, որ այս մոտեցումը նվազեցնում է արդյունքի փոփոխականությունը:

Անդերրայթինգի ռազմավարությունը ներկայացվում է գործարար ծրագրում, որը սահմանում է ապահովագրման ենթակա գործունեության դասերը և ենթադասերը, ինչպես նաև այն տարածքը, որտեղ գործունեությունը պետք է ապահովագրվի: Ռազմավարությունն իրականացվում է անդերրայթինգի ուղեցույցների միջոցով, որոնք սահմանում են անդերրայթինգի մանրամասն կանոններ ծառայությունների յուրաքանչյուր տեսակի համար: Ուղեցույցներն անդրադառնում են ապահովագրություն հասկացությանը և ընթացակարգերին, հարակից ռիսկերի նկարագրերին, ժամկետներին և պայմաններին, իրավունքներին և պարտականություններին, փաստաթղթավորման պահանջներին, պայմանագրերի ձևերին/պոլիսների օրինակներին, կիրառելի սակագների հիմնավորմանը և կիրառելի սակագների վրա ազդող գործոններին: Սակագների հաշվարկն իրականացնելիս հիմք են ընդունվում պատահարների հավանականությունը և փոփոխականությունը, վնասի գործակիցը, պայմանական դեպքերի, ծախսերի և շահույթի հավանականության նախատեսումը: Անդերրայթինգի ուղեցույցների պահպանումը կանոնավոր կերպով վերահսկվում է ղեկավարության կողմից:

*(բ) Վերաապահովագրության ռազմավարություն*

Ընկերությունը վերաապահովագրում է անդերրայթինգի ենթարկվող ռիսկերի մի մասը՝ վնաս կրելու ռիսկը կառավարելու, Ընկերության ֆինանսական կայունությունը և կապիտալ ռեսուրսների անվտանգությունն ապահովելու նպատակով: Ընկերությունը հիմնականում գնում է համամասնական քվոտային վերաապահովագրություն, ավելցուկի վերաապահովագրություն և ոչ համամասնական վերաապահովագրություն գերազանցող վնասի հիմունքով, ինչը թույլ է տալիս նվազեցնել ռիսկը յուրաքանչյուր առանձին պայմանագրի համար կամ որոշ այլ հանգամանքներում՝ կախված գործունեության ոլորտից:
Վերաապահովագրությանը փոխանցված պայմանագրերը ենթարկվում են պարտքային ռիսկի առանձին վերաապահովագրության պայմանագրերի, ինչպես նաև վերաապահովագրողների կանոնների և նախասիրությունների հետ կապված: Ընկերությունը կանոնավոր կերպով վերահսկում է վերաապահովագրվողների ֆինանսական վիճակը և պարբերաբար վերանայում է վերաապահովագրության պայմանները:

**Ապահովագրության պայմանագրերի պայմանները և ներառվող ռիսկերի բնույթը**

Ստորև ներկայացված են ապահովագրության պայմանագրերի այն պայմանները, որոնք էական ազդեցություն ունեն ապահովագրության պայմանագրերից առաջացող դրամական միջոցների ապագա հոսքերի գումարների, ժամկետների և անորոշության վրա: Ի լրումն, ստորև ներկայացվածը թույլ է տալիս գնահատել Ընկերության հիմնական ծառայությունները և հարակից ռիսկերի կառավարման համար կիրառվող Ընկերության մեթոդները:



Scanned with CamScanner

*(ա) Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն*

*Առանձնահատկությունները*

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրությունը (ԱՊՊԱ) կարգավորվում է կառավարության կողմից ապահովագրավճարների հաշվարկման տոկոսադրույքների և ծածկույթի մասով: ԱՊՊԱ պայմանագրերով փոխադրամիջոցի սեփականատիրոջը փոխհատուցվում են այն գումարները, որոնք նա վճարում է երրորդ անձանց գույքը վնասելու, մահվան կամ վնասվածքների դեպքում: Այդ իսկ պատճառով, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը ներառում է համապատասխանաբար կարճ ու երկար ժամանակահատված ապահովագրական գումարի ստացման և հատուցման վճարման միջև: Որպես կանոն, առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովադրին ավտոտրանսպորտային միջոցի գույքային վնաս հասցնելու համար: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերվում են անձնական վնասների գծով հատուցումներին:

*Ապահովագրական ռիսկի կենտրոնացում*

Ընկերության ապահովագրական ռիսկի առանցքային խնդիրն ապահովագրական ռիսկի կենտրոնացումն է, որը կարող է առաջանալ, երբ առանձին պատահարը կամ պատահարների շարքը կարող է զգալի ազդեցություն ունենալ Ընկերության պարտավորությունների վրա: Նման կենտրոնացումները կարող են առաջանալ ապահովագրության մեկ առանձին պայմանագրից կամ համանման ռիսկային առանձնահատկություններով մի շարք փոխկապակցված պայմանագրերից և վերաբերվում այն հանգամանքներին, որոնք կարող են տեղիք տալ զգալի պարտավորությունների: Ապահովագրական ռիսկի կենտրոնացման կարևոր խնդիրն այն է, որ այն կարող է առաջանալ մի շարք առաձին դասերի կամ պայմանագրերի շարքի հետ կապված ռիսկերի կուտակումից:
Ռիսկի կենտրոնացումը կարող է առաջանալ բարդ հետևանքներով ու փոքր հաճախականությամբ պատահարներից, այդ թվում՝ բնական աղետներից և այնպիսի իրավիճակներում, որտեղ անդերրայթինգն ուղղված է առանձին խմբին, օրինակ՝ առանձին աշխարհագրական տարածաշրջանին:

*Ռիսկի կառավարումը*

Այս ռիսկերի կառավարման համար Ընկերության կողմից կիրառվող հիմնական մեթոդները երկու կողմ ունեն: Առաջինը, ռիսկը կառավարվում է համապատասխան անդերրայթինգի միջոցով: Անդերրայթերներին չի թույլատրվում ընդունել այնպիսի ռիսկեր, որոնց գծով ակնկալվող շահույթը համաչափ չէ ընդունված ռիսկերին: Երկրորդը, ռիսկը կառավարվում է վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը ձեռք է բերում վերաապահովագրություն ավտոտրանսպորտային միջոցների և գույքի ապահովագրության համար: Ընկերությունը կանոնավոր կերպով գնահատում է վերաապահովագրության հետ կապված ծախսերը և օգուտները:

*(բ) Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն*

*Առանձնահատկությունները*

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությանը ներառում է ամբողջական համապարփակ ապահովագրությունը (ԿԱՍԿՈ) և ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող անձնական դժբախտ պատահարները: ԿԱՍԿՈ պայմանագրերով կազմակերպություններին և անհատներին փոխհատուցվում է փոխադրամիջոցների հետ կապված կրած կամ դրանց հասցված վնասը: Այդ իսկ պատճառով, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը ներառում է համապատասխանաբար կարճ ու երկար ժամանակահատված ապահովագրական գումարի ստացման և հատուցման վճարման միջև:



Scanned with CamScanner

Որպես կանոն, առավել արագ վճարվում են այն պահանջները, որոնք փոխհատուցում են ապահովադրին ավտոտրանսպորտային միջոցի գույքային վնաս հասցնելու համար: Պահանջները, որոնց վճարումն առավել երկար ժամանակ է պահանջում և որոնք առավել դժվար գնահատելի են, վերաբերվում են անձնական վնասների գծով հատուցումներին:

*Ռիսկի կառավարումը*

Որպես կանոն, ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն հետ կապված պահանջները ներկայացվում են ոչ մեծ հետաձգումներով, և պահանջների բարդությունը համեմատաբար մեծ չէ: Ընդհանուր առմամբ, գործունեության այս ոլորտի պահանջների գծով պարտավորություններն առաջացնում են միջին չափի ռիսկ: Ընկերությունը վերահսկում է և արձագանքում է վերանորոգման ծախսերի, վնասվածքների փոխհատուցման, գողությունների և դժբախտ պատահարների հաճախականության հետ կապված փոփոխություններին:
Պահանջների ներկայացման հաճախականության վրա ազդում են անբարենպաստ եղանակային պայմանները, պահանջների քանակն ավելի մեծ է լինում ձմռան ամիսներին:
Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության տեսակները ենթարկվում են անդերրայթինգի՝ ելնելով դժբախտ պատահարների վիճակագրական տվյալներից: Ընկերությունը վերաապահովագրում է ԿԱՍԿՈ ռիսկերը քվոտային վերաապահովագրության վերաապահովագրության միջոցով, որի արդյունքում վերջնական զուտ վնասը յուրաքանչյուր դեպքի համար սահմանափակվում է 30%-ի չափով:

*(գ) Առողջության ապահովագրություն*

*Առանձնահատկությունները*

Բժշկական ապահովագրության պայմանագրերով Ընկերությունը փոխհատուցում է բուժման և հիվանդանոցի ծախսերը: Այս պորտֆելը հիմնականում ներառում է կազմակերպությունների կորպորատիվ ապահովագրության փաթեթները: Ընկերությունն ակտիվ կերպով չի խթանում անհատների առողջության ապահովագրության պայմանագրերի կիրառումը՝ ապահովագրվողի ոչ պատշաճ ընտրությունից խուսափելու համար:

*Ռիսկի կառավարումը*

Առողջության ապահովագրությունը կախված է բուժման անհրաժեշտության առաջացումից: Ընկերությունը վերահսկում է իր ռիսկերը կորպորատիվ ապահովագրության փաթեթների և բժշկական ստուգումների միջոցով, որպեսզի գները որոշելիս հաշվի առնվեն ապահովագրվողի ներկա առողջական վիճակը և ընտանիքի բժշկական պատմությունը:

*(դ) Պարտադիր առողջության ապահովագրություն*

*Առանձնահատկությունները*

Պարտադիր բժշկական ապահովագրությունը մշակվել է կառավարության կողմից՝ ապահովագրական ընկերությունների միջոցով: Փաթեթը չի կարող փոփոխվել ապահովագրական ընկերության կողմից:

*Ռիսկի կառավարումը*

Օգտագործելով ապահովագրական հատուցման բացառությունները, Ընկերությունը մշակում է լրացուցիչ փաթեթներ՝ պլանավորելով կիրառել ռիսկերի վերահսկողության մեխանիզմներ:
Ընկերությունն առավելապես զբաղվում է կոլեկտիվ ապահովագրության առաջխաղացմամբ՝ ապահովագրվողի ոչ պատշաճ ընտրությունից խուսափելու համար:



Scanned with CamScanner

*(ե) Գույքի ապահովագրություն*

*Առանձնահատկությունները*

Ընկերությունը իրականացնում է գույքի ապահովագրություն: Այս ծառայությունը ներառում է ինչպես անձնական, այնպես էլ՝ արտադրական գույքի ապահովագրություն: Գույքի ապահովագրությունը փոխատուցում է ապահովադրին, որոշակի սահմանափակումներով կամ ավելցուկներով, նյութական գույքին հասցված կամ դրա հետ կապված կրած վնասը:
Շենքերին կամ դրանց պարունակությանը հասցված վնասի փոխհատուցման պահանջի համար հիմք հանդիսացող պատահարը սովորաբար հանկարծակի է տեղի ունենում (հրդեհ և անօրինական ներխուժում) և պատճառը հեշտ որոշելի է: Արդյունքում, պահանջը ներկայացվում է կարճ ժամկետում և կարող է վճարվել առանց հետաձգումների: Այդ իսկ պատճառով, գույքի ապահովագրությունը դասակարգվում է որպես կարճաժամկետ:

*Ռիսկի կառավարումը*

Այս ծառայության հետ կապված հիմնական ռիսկերն են անդերրայթինգի ռիսկը, մրցակցության ռիսկը և պահանջների ներկայացման ռիսկը (ներառյալ բնական աղետների ազդեցության փոփոխական տարածքները): Գույքի ապահովագրության հետ կապված Ընկերությունը ենթարկվում է նաև այնպիսի ռիսկի, որը կարող է առաջանալ պահանջներ ներկայացնողների կողմից կորստի չափի արհեստականորեն մեծացման կամ անբարեխիղճ պահվածքի դեպքում:

Անդերրայթինգի ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը չի հավաքագրի անհրաժեշտ ապահովագրավճարներն իր կողմից ապահովագրված տարբեր գույքերի գծով: Անձնական գույքի ապահովագրության դեպքում ակնկալվում է, որ առկա կլինեն համանման ռիսկ ներառող գույքի մեծ թվով տեսակներ: Այնուամենայնիվ, այս մոտեցումը չի գործում առևտրային գործունեության համար: Առևտրային գույքի համար ներկայացվող առաջարկները ներառում են վայրի, գործունեության տեսակի և անվտանգության միջոցառումների համադրությունը: Այս ռիսկերին համապատասխանող ապահովագրավճարների հաշվարկը սուբյեկտիվ է, այսպիսով նաև՝ ռիսկային:

Այս ռիսկերը հիմնականում կառավարվում են գնագոյացման և վերաապահովագրության միջոցով: Ընկերությունը կիրառում է անդերրայթինգի խիստ չափանիշներ՝ վնաս կրելու ռիսկն Ընկերության համար ընդունելի դարձնելու համար: Ընկերությունը վերաապահովագրում է գույքի ապահովագրման հետ կապված ռիսկերն ավելցուկի վերաապահովագրության և ֆակուլտատիվ վերաաապահովագրության միջոցով, որոնք սահմանափակում են Ընկերության վնասի չափը մինչև 60,000 հազար դրամը փոխկապակցված ռիսկերի համար:

*(զ) Ավիացիա*

*Առանձնահատկությունները*

Ընկերությունը զբաղվում է ինքնաթիռների ապահովագրությամբ: Ինքնաթիռների ապահովագրությունը ծածկում է ավիացիոն ռիսկերից առաջացող վնասները, որոնք կապված են ինքնաթիռի սպասարկման և օգտագործման, գույքի վնասի, բեռների կորստի կամ մարդկանց վնասվածքների հետ: Այն ապահովագրում է թե սեփականատերերին և թե ինքնաթիռների օպերատորներին չկանխատեսվող վնասից:



Scanned with CamScanner

*Ռիսկի կառավարումը*

Ապահովագրության այս տեսակի հետ կապված հիմնական ռիսկերն անդերրայթինգի և պահանջների գծով ռիսկերն են (ներառյալ՝ բնական աղետների փոփոխական հաճախականությունը): Ընկերությունը նաև ենթարկվում է պահանջատերերի կողմից չափազանցության և ոչ ազնիվ գործողությունների ռիսկի: Այս ռիսկերը հիմնականում կառավարվում են գնորոշման և վերաապահովագրության գործընթացների միջոցով: Ընկերությունն օգտագործում է անդերրայթինգի խիստ չափանիշներ, ապահովելու համար, որպեսզի վնաս կրելու ռիսկն ընդունելի լինի Ընկերության համար՝ սահմանելով որոշակի սահմանաչափեր վնաս կրելու յուրաքայչյուր դեպքի համար և ապահովելով ամբողջական վերաապահովագրություն:

**Վերաապահովագրական ռիսկ**

Ընկերությունը փոխանցում է ապահովագրական ռիսկն անհատական և պորտֆելային ռիսկերը ներառող բազմաթիվ պայմանագրերի գծով անդերրայթինգի հետ կապված վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության այս պայմանագրերը տարածում են ռիսկը և նվազագույնի են հասցնում վնասի հետևանքները: Ֆակուլտատիվ վերաապահովագրության հետ կապված յուրաքանչյուր ռիսկի գումարը կախված է առանձին ռիսկի Ընկերության գնահատականից, սակայն, ամեն դեպքում, չի գերազանցում 60,000 հազար դրամը վերաապահովագրության յուրաքանչյուր պայմանագրի համար:

Վերաապահովագրության պայմանագրերի պայմանների համաձայն՝ վերաապահովագրողը համաձայնվում է վճարել վնասի իր մասը՝ պահանջը վճարելու դեպքում: Այնուամենայնիվ, Ընկերությունը շարունակում է պարտավորություն կրել իր ապահովադիրների առջև փոխանցված ապահովագրության հետ կապված, եթե վերաապահովագրողին չհաջողվի կատարել ստանձնած պարտականությունները:

Վերաապահովագրողին ընտրելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում վերջիններիս ֆինանսական վիճակը և վճարունակությունը: Վերաապահովագրողի վճարունակությունը գնահատվում է արտաքին վարկանիշային և ներքին հետազոտությունների արդյունքում ձեռքբերված ու ֆինանսական հաշվետվություններից ստացված տեղեկատվության հիման վրա:



Scanned with CamScanner

**Պահանջների զարգացումը**

Պահանջների զարգացման վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է Ընկերության ապահովագրական ռիսկը լուսաբանելու նպատակով: Աղյուսակներում համեմատվում են պատահարի տարվա ընթացքում վճարված հատուցումներն այդ հատուցումների գծով ձևավորված պահուստների հետ: Աղյուսակի վերին մասում ներկայացվում է կուտակային պահանջների ներկա գնահատականը և ցուցադրվում են գնահատված պահանջների փոփոխությունները հետագա հաշվետու տարում կամ պատահարի տարվա վերջում: Գնահատված գումարը ավելանում կամ նվազում է վնասների վճարմանը զուգահեռ, և ավելի մեծ ծավալով տեղեկատվություն է հայտնի դառնում չվճարված պահանջների բարդության ու հաճախականության մասին: Աղյուսակի ստորին մասում ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված ընդհանուր պահուստի և կուտակային պահանջների գնահատականի համադրումը:

Այս բաժինը ներառում է նաև առանձին պահանջների զարգացման աղյուսակները ԱՊՊԱ-ի համար:

Թեև աղյուսակներում ներառված տեղեկատվությունը ներկայացնում է չվճարված պահանջների գնահատականի համարժեքությունն անցյալի փորձի տեսանկյունից, այս ֆինանսական հաշվետվություններն օգտագործողները նախազգուշացվում են ներկա չվճարված վնասի մնացորդի վրա նախկին ավելցուկի կամ պակասորդի տարածման վերաբերյալ: Ընկերությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել 2025թ. վերջի դրությամբ վճարման ենթակա ընդհանուր պահանջները: Այնուամենայնիվ, ելնելով պահուստավորման գործընթացին բնորոշ անորոշություններից, հնարավոր չէ միանշանակորեն հաստատել, որ ի վերջո կպարզվի, որ այս պահանջները համապատասխանորեն են գնահատված:

**Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – Ընդամենը**

| | Պատահարի տարի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **հազար դրամ** | **2019թ. և ավելի վաղ** | **2020թ.** | **2021թ.** | **2022թ.** | **2023թ.** | **2024թ.** | **2025թ.** | **Ընդամենը** |
| Կուտակային պահանջների գնահատական | | | | | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 10,272,939 | 1,673,389 | 1,963,288 | 1,822,533 | 1,541,400 | 1,778,104 | 3,487,434 | 3,487,434 |
| - մեկ տարի անց | 10,680,258 | 2,003,990 | 2,284,971 | 2,189,351 | 1,794,371 | 2,240,366 | - | 2,240,366 |
| - երկու տարի անց | 10,751,895 | 2,027,614 | 2,321,848 | 2,214,568 | 1,822,437 | - | - | 1,822,437 |
| - երեք տարի անց | 10,783,253 | 2,033,287 | 2,332,910 | 2,218,044 | - | - | - | 2,218,044 |
| - չորս տարի անց | 10,803,065 | 2,043,934 | 2,335,793 | - | - | - | - | 2,335,793 |
| - հինգ և ավելի տարիներ անց | 10,809,900 | 2,045,265 | - | - | - | - | - | 2,045,265 |
| - վեց և ավելի տարիներ անց | 10,814,164 | - | - | - | - | - | - | 10,814,164 |
| Կուտակային պահանջներ | 10,814,164 | 2,045,265 | 2,335,793 | 2,218,044 | 1,822,437 | 2,240,366 | 3,487,434 | 24,963,503 |
| Կուտակային վճարումները հաշվետու ամսաթվի դրությամբ | 10,272,939 | 2,080,708 | 2,365,525 | 2,199,199 | 1,970,580 | 2,084,835 | 3,989,717 | 24,963,503 |
| **Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով** | **1,219** | **2,029** | **2,299** | **7,807** | **93,323** | **94,942** | **355,400** | **355,400** |



Scanned with CamScanner

Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – ԱՊՊԱ

| հազար դրամ | Պատահարի տարի | | | | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 2019թ. և ավելի վաղ | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. | 2024թ. | 2025թ. | |
| Կուտակային պահանջների գնահատական | | | | | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 7,256,793 | 1,255,609 | 1,500,253 | 1,377,028 | 1,222,318 | 1,405,975 | 2,915,514 | 2,915,514 |
| - մեկ տարի անց | 7,542,250 | 1,474,180 | 1,725,647 | 1,620,044 | 1,401,437 | 1,724,016 | - | 1,724,016 |
| - երկու տարի անց | 7,597,576 | 1,497,652 | 1,761,799 | 1,645,227 | 1,429,383 | - | - | 1,429,383 |
| - երեք տարի անց | 7,627,929 | 1,502,907 | 1,772,861 | 1,648,702 | - | - | - | 1,648,702 |
| - չորս տարի անց | 7,647,617 | 1,512,803 | 1,775,340 | - | - | - | - | 1,775,340 |
| - հինգ և ավելի տարիներ անց | 7,654,452 | 1,514,135 | - | - | - | - | - | 1,514,135 |
| - վեց և ավելի տարիներ անց | 7,658,717 | - | - | - | - | - | - | 7,658,717 |
| Կուտակային պահանջներ | 7,658,717 | 1,514,135 | 1,775,340 | 1,648,702 | 1,429,383 | 1,724,016 | 2,915,514 | 18,665,807 |
| Կուտակային վճարումները հաշվետու ամսաթվի դրությամբ | 7,256,793 | 1,541,066 | 1,774,149 | 1,656,248 | 1,526,429 | 1,638,069 | 3,273,053 | 18,665,807 |
| Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով | 270 | 1,079 | 1,349 | 4,857 | 9,984 | 11,604 | 171,894 | 171,894 |



Scanned with CamScanner

Պահանջների զարգացման վերլուծություն (համախառն հիմունքով) – ԱՊՊԱ-ից տարբեր

| հազար դրամ | 2019թ. և ավելի վաղ | 2020թ. | 2021թ. | 2022թ. | 2023թ. | 2024թ. | 2025թ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կուտակային պահանջների գնահատական | | | | | | | | |
| Պատահարի տարվա վերջի դրությամբ | 3,016,146 | 417,780 | 463,035 | 445,505 | 319,082 | 372,129 | 571,920 | 571,920 |
| - մեկ տարի անց | 3,138,008 | 529,810 | 559,324 | 569,307 | 392,934 | 516,350 | - | 516,350 |
| - երկու տարի անց | 3,154,319 | 529,962 | 560,049 | 569,341 | 393,054 | - | - | 393,054 |
| - երեք տարի անց | 3,155,324 | 530,380 | 560,049 | 569,342 | - | - | - | 569,342 |
| - չորս տարի անց | 3,155,448 | 531,131 | 560,453 | - | - | - | - | 560,453 |
| - հինգ և ավելի տարիներ անց | 3,155,448 | 531,130 | - | - | - | - | - | 531,130 |
| - վեց և ավելի տարիներ անց | 3,155,447 | - | - | - | - | - | - | 3,155,447 |
| Կուտակային պահանջներ | 3,155,447 | 531,130 | 560,453 | 569,342 | 393,054 | 516,350 | 571,920 | 6,297,696 |
| Կուտակային վճարումները հաշվետու ամսաթվի դրությամբ | 3,016,146 | 539,642 | 591,376 | 542,951 | 444,151 | 446,766 | 716,664 | 6,297,696 |
| Համախառն պարտավորություններ չվճարված պահանջների գծով | 949 | 949 | 950 | 2,950 | 83,339 | 83,338 | 183,506 | 355,981 |



Scanned with CamScanner

## 6. Ապահովագրական գործունեությունից հասույթ

| 2025թ. հազար դրամ | ԱՊՊԱ | Կասկո | Առողջության ապահովագրություն | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարների ապահովագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պայմանագրեր հաշվառվող ընդհանուր չափման մոդելով | - | - | - | 38,720 | - | - | **38,720** |
| Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցումով | 4,853,749 | 387,739 | 716,197 | 527,433 | 822,438 | 136,133 | **7,443,689** |
| | **4,853,749** | **387,739** | **716,197** | **566,153** | **822,438** | **136,133** | **7,482,409** |

| 2024թ. հազար դրամ | ԱՊՊԱ | Կասկո | Առողջության ապահովագրություն | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարների ապահովագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պայմանագրեր հաշվառվող ընդհանուր չափման մոդելով | - | - | - | 27,406 | - | - | **27,406** |
| Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցումով | 2,352,100 | 244,885 | 588,059 | 373,483 | 272,021 | 181,450 | **4,011,998** |
| | **2,352,100** | **244,885** | **588,059** | **400,889** | **272,021** | **181,450** | **4,039,404** |



Scanned with CamScanner

7. Ապահովագրական գործունեության ծախսեր

| 2025թ.<br>հազար դրամ | ԱՊՊԱ | Կասկո | Առողջության ապահովագրություն | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարների ապահովագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | 3,279,357 | 88,342 | 614,696 | 24,382 | 1,505 | 7,561 | 4,015,843 |
| Կրած պահանջների գծով պարտավորության փոփոխություն | 107,122 | (13,409) | (34,857) | 68,628 | (1,892) | (135) | 125,457 |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | 795,193 | 105,291 | 25,268 | 111,151 | 373,449 | 36,819 | 1,447,171 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնաս | 22,238 | 8,267 | 8,888 | (3,472) | 130 | 685 | 36,736 |
| | 4,203,910 | 188,491 | 613,995 | 200,689 | 373,192 | 44,930 | 5,625,207 |

| 2024թ.<br>հազար դրամ | ԱՊՊԱ | Կասկո | Առողջության ապահովագրություն | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարների ապահովագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | 1,615,547 | 33,994 | 387,618 | 18,862 | 2,250 | 4,041 | 2,062,312 |
| Կրած պահանջների գծով պարտավորության փոփոխություն | 41,860 | 60,193 | 17,553 | 10,307 | (495) | (328) | 129,090 |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | 458,448 | 61,425 | 15,815 | 84,607 | 109,795 | 41,235 | 771,325 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնաս | 7,297 | 161 | - | 4,361 | - | - | 11,819 |
| | 2,123,152 | 155,773 | 420,986 | 118,137 | 111,550 | 44,948 | 2,974,546 |



Scanned with CamScanner

## 8. Զուտ վերաապահովագրական ծախս

| 2025թ.<br>հազար դրամ | ԿԱՄԿՈ | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարներից ապահովագրություն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ֆինանսական ռիսկի փոփոխություն | (2,251) | - | (2,619) | - | **(4,870)** |
| Մատուցված ծառայությունների դիմաց ճանաչված Պայմանագրային ծառայությունների մարժա | (164,252) | (173,533) | (57,638) | (12,662) | **(408,085)** |
| *Պայմանագրեր հաշվառվող Ընդհանուր չափման մոդելով* | *(166,503)* | *(173,533)* | *(60,257)* | *(12,662)* | ***(412,955)*** |
| *Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցում* | *(4,246)* | *(11,932)* | - | *(17,300)* | ***(33,478)*** |
| **Ընդամենը վերապահովագրական վճարներ** | **(170,749)** | **(185,465)** | **(60,257)** | **(29,962)** | **(446,433)** |
| Ոչ Ֆինանսական ռիսկի փոփոխություն | 4,410 | 2,317 | - | - | **6,727** |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | 57,511 | 75,523 | 28,981 | 4,637 | **166,652** |
| *Պայմանագրեր հաշվառվող Ընդհանուր չափման մոդելով* | *61,921* | *77,840* | *28,981* | *4,637* | ***173,379*** |
| *Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցում* | - | - | - | - | - |
| ***Ընդամենը վերապահովագրողից վերականգնված վճարներ*** | ***61,921*** | ***77,840*** | ***28,981*** | ***4,637*** | ***173,379*** |
| **Զուտ վերապահովագրական ծախս** | **(108,828)** | **(107,625)** | **(31,276)** | **(25,325)** | **(273,054)** |

| 2024թ.<br>հազար դրամ | ԿԱՄԿՈ | Գույքի ապահովագրություն | Դժբախտ պատահարներից ապահովագրոթյուն | Այլ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| Ոչ ֆինանսական ռիսկի փոփոխություն | (4,553) | (2,331) | - | - | **(6,884)** |
| Մատուցված ծառայությունների դիմաց ճանաչված Պայմանագրային ծառայությունների մարժա | (83,262) | (101,076) | (35,078) | (19,804) | **(239,220)** |
| *Պայմանագրեր հաշվառվող Ընդհանուր չափման մոդելով* | *(87,815)* | *(103,407)* | *(35,078)* | *(19,804)* | *(246,104)* |
| *Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցում* | *(8,812)* | *(6,260)* | - | - | *(15,072)* |
| **Ընդամենը վերապահովագրական վճարներ** | (96,627) | (109,667) | (35,078) | (19,804) | (261,176) |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | 26,489 | 17,470 | 19,572 | 4,480 | **68,011** |
| *Պայմանագրեր հաշվառվող Ընդհանուր չափման մոդելով* | *26,489* | *17,470* | *19,572* | *4,480* | *68,011* |
| *Պայմանագրեր հաշվառվող ապահովագրական վճարի բաշխման մոտեցում* | - | *647* | - | - | *647* |
| *Ընդամենը վերապահովագրողից վերականգնված վճարներ* | *26,489* | *18,117* | *19,572* | *4,480* | *68,658* |
| **Զուտ վերապահովագրական ծախս** | (70,138) | (91,550) | (15,506) | (15,324) | (192,518) |



Scanned with CamScanner

## 9. Այլ եկամուտ ապահովագրական գործունեությունից

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Եկամուտներ ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում | 183,002 | 102,995 |
| Եկամուտներ սուբրոգացիաների գծով | 77,319 | 38,503 |
| Եկամուտներ ավել վճարված գումարների գծով | 23,114 | 65,123 |
| Այլ եկամուտ | 21,343 | 8,863 |
| | **304,778** | **215,484** |

## 10. Այլ ծախսեր

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Աշխատակիցների հատուցումներ | 595,764 | 382,368 |
| ASWA հարթակի օգտագործման վճար | 328,249 | 203,576 |
| Ծախսեր ուղիղ հատուցումների վերջնահաշվարկի արդյունքում | 136,706 | 140,861 |
| Պահանջների կարգավորմանն ուղղված ծախսեր | 97,980 | 84,110 |
| Ծրագրային ապահովման ծախսեր | 58,288 | 46,890 |
| Անդամավճարների գծով ծախս | 54,242 | 53,404 |
| Բանկային ծառայությունների ծախսեր | 46,343 | 26,470 |
| Գովազդի և ներկայացուցչական ծախսեր | 43,491 | 8,533 |
| Աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ | 36,300 | 31,644 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 30,448 | 29,302 |
| Գրասենյակի և կոմունալ ծախսեր | 20,132 | 20,070 |
| Այլ ծախսեր | 76,456 | 41,052 |
| | **1,524,399** | **1,068,280** |

## 11. Շահութահարկի գծով ծախս

Հաշվետու տարվա համար ՀՀ «Հարկային օրենսգրքի» համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2024թ.՝ 18%):

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Ընթացիկ հարկի գծով ծախս | 138,969 | 54,328 |
| Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային ծախս | 12,734 | 11,619 |
| | **151,703** | **65,947** |



Scanned with CamScanner

Արդյունավետ հարկային դրույքի համադրում

| | 2025թ. | | 2024թ. | |
|---|---|---|---|---|
| | Հազար ՀՀ դրամ | Արդյունավետ հարկային դրույքաչափ % | Հազար ՀՀ դրամ | Արդյունավետ հարկային դրույքաչափ % |
| **Շահույթ հարկումից առաջ** | **908,727** | | **418,778** | |
| Շահութահարկ (18%) | (163,571) | (18%) | (75,380) | (18%) |
| Հարկային նպատակով չնվազեցվող (ծախսերի)/ չհարկվող եկամուտների զուտ ազդեցություն | (11,868) | (1%) | 9,433 | 2% |
| **Ժամանակաշրջանի շահութահարկի գծով ծախս** | **(151,703)** | **(17%)** | **(65,947)** | **(16%)** |

Հետաձգված հարկը հաշվարկվում է ժամանակավոր տարբերությունների վրա՝ 18% (2024թ.՝ 18%) հարկային դրույքաչափով:

Ստորև ներկայացված է հետաձգված հարկային պարտավորության շարժը.

| | 2025թ. հազ. դրամ | 2024թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **Տարեսկզբի մնացորդ** | (15,890) | (4,271) |
| Շահույթ/վնասում ճանաչված | (12,734) | (11,619) |
| Սեփական կապիտալում ճանաչված | (80,472) | - |
| **Տարեվերջի մնացորդ** | **(109,096)** | **(15,890)** |

Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների գծով ակտիվները/(պարտավորությունները)՝ ըստ ծագման աղբյուրների ներկայացվում են ստորև.



Scanned with CamScanner

| | Ակտիվներ | Պարտավորություններ | Զուտ | (Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին | Նվազեցված այլ համապարփակ արդյունքում |
|---|---|---|---|---|---|
| | 2025թ. հազ. դրամ | 2025թ. հազ. դրամ | 2025թ. հազ. դրամ | 2025թ. հազ. դրամ | 2025թ. հազ. դրամ |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | (80,245) | (80,245) | **227** | **(80,472)** |
| Դրամական միջոցներ | - | (164) | (164) | **12** | - |
| Բանկային ավանդներ | - | (8,260) | (8,260) | **(1,688)** | - |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 12,817 | - | 12,817 | - | - |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | - | (61,594) | (61,594) | **(26,564)** | - |
| Այլ պարտավորություններ | 28,350 | - | 28,350 | **15,279** | - |
| Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ) | **41,167** | **(150,263)** | **(109,096)** | **(12,734)** | **(80,472)** |
| | **2024թ. հազ.դրամ** | **2024թ. հազ.դրամ** | **2024թ. հազ.դրամ** | **2024թ. հազ.դրամ** | **2024թ. հազ.դրամ** |
| Դրամական միջոցներ | - | (176) | (176) | **(141)** | - |
| Բանկային ավանդներ | - | (6,572) | (6,572) | **(2,379)** | - |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 12,817 | - | 12,817 | - | - |
| Ապահովագրության պայմանագրերի գծով պահուստներ | - | (35,030) | (35,030) | **(16,817)** | - |
| Այլ պարտավորություններ | 13,071 | - | 13,071 | **7,718** | - |
| Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ) | **25,888** | **(41,778)** | **(15,890)** | **(11,619)** | **-** |



Scanned with CamScanner

**12. Դրամական միջոցներ**

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Ընթացիկ հաշիվներ հայկական բանկերում | 91,110 | 97,530 |
| | **91,110** | **97,530** |

Ընկերության դրամական միջոցները պահվում են ՀՀ վստահելի բանկերում: Ընկերությունը դրամական միջոցների պարտքային կորստի ռիսկը գնահատում է որպես ոչ էական:

**13. Բանկային ավանդներ**

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| 10 խոշոր հայկական բանկեր | 3,331,033 | 3,260,407 |
| Այլ հայկական բանկեր | 938,196 | 383,316 |
| | **4,269,229** | **3,643,723** |

Ընկերությունը ժամկետային ավանդների պարտքային կորստի ռիսկը գնահատում է որպես ոչ էական:

**14. Տրամադրված փոխառություններ**

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Տրված փոխառություն ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությանը* | 314,795 | - |
| Տրված փոխառություն ռեզ. ֆիզ. անձ | 4,795 | 7,795 |
| | **319,590** | **7,795** |

* Ընկերությունը 2025թ. ընթացքում տրամադրել է փոխառություններ այլ ֆինանսական կազմակերպությանը 12% տոկոսադրույքով, որոնց մարման ժամկետը տարեվերջի դրությամբ մինչև 1 տարի է:

Տրամադրված փոխառությունները 31 դեկտեմբեր 2025թ. դրությամբ ժամկետանց չեն, և Ընկերությունը պարտքային կորստի ռիսկը գնահատում է որպես ոչ էական:



Scanned with CamScanner

## 15. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| ՀՀ պետական պարտատոմսեր | 1,581,347 | 936,408 |

Ֆինանսական գործիքները նախորոշվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող սկզբնական ճանաչման պահին և ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական գործիքները:

Իրական արժեքով շահույթ վնասի միջոցով չափվող արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարման ժամկետների ներկայացված են ստորև:

| | 31 դեկտեմբերի 2025թ. | | 31 դեկտեմբերի 2025թ. | |
|---|---|---|---|---|
| | Միջին տոկոսադրույք | Մարման ժամկետ | Միջին տոկոսադրույք | Մարման ժամկետ |
| ՀՀ պետական պարտատոմսեր | | | | |
| - ՀՀ դրամով | 7.61% | 2026-2033 | 8.00% | 2025-2026 |
| - ԱՄՆ դոլարով | 5.37% | 2031 | 7.15% | 2025 |

Այս արժեթղթերի իրական արժեքը դասվում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին:



Scanned with CamScanner

**16. Ապահովագրական պայմանագրերի մասով ակտիվ/(պարտավորություն)**

Ապահովագրական պայմանագրերի գծով ակտիվների/(պարտավորությունների) մնացորդները և շարժը 2025թ.-ի ընթացքում ըստ ապահովագրական պայմանագրերի խմբերի ներկայացված է ստորև՝

| ԱՊՊԱ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն: Առանց վնասի բաղադրիչ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն: Վնասի բաղադրիչ | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (1,225,750) | (15,512) | (407,552) | **(1,648,814)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(1,225,750)** | **(15,512)** | **(407,552)** | **(1,648,814)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 4,853,749 | - | - | **4,853,749** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **4,853,749** | **-** | **-** | **4,853,749** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (3,279,357) | **(3,279,357)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (107,122) | **(107,122)** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (22,238) | - | **(22,238)** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(22,238)** | **(3,386,479)** | **(3,408,717)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (795,193) | - | - | **(795,193)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **4,058,556** | **(22,238)** | **(3,386,479)** | **649,839** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **4,058,556** | **(22,238)** | **(3,386,479)** | **649,839** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **2,832,806** | **(37,750)** | **(3,794,031)** | **(998,975)** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (5,436,572) | - | - | **(5,436,572)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 823,193 | - | - | **823,193** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 3,310,841 | **3,310,841** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(4,613,379)** | **-** | **3,310,841** | **(1,302,538)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31.12.2025 | 12,362 | - | - | 12,362 |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31.12.2025 | (1,792,935) | (37,750) | (483,190) | (2,313,875) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(1,780,573)** | **(37,750)** | **(483,190)** | **(2,301,513)** |



Scanned with CamScanner

| ԿԱՄԿՈ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (135,098) | (161) | (16,819) | **(152,078)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(135,098)** | **(161)** | **(16,819)** | **(152,078)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 387,739 | - | - | **387,739** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **387,739** | **-** | **-** | **387,739** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (88,342) | **(88,342)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 13,409 | **13,409** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (8,267) | - | **(8,267)** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(8,267)** | **(74,933)** | **(83,200)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (105,291) | - | - | **(105,291)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **282,448** | **(8,267)** | **(74,933)** | **199,248** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **282,448** | **(8,267)** | **(74,933)** | **199,248** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **147,350** | **(8,428)** | **(91,752)** | **47,170** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (350,139) | - | - | **(350,139)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 62,781 | - | - | **62,781** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 40,751 | **40,751** |
| **Ընդամենը դրամակն հոսքեր** | **(287,358)** | **-** | **40,751** | **(246,607)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | **(140,008)** | **(8,428)** | **(51,001)** | **(199,437)** |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(140,008)** | **(8,428)** | **(51,001)** | **(199,437)** |



Scanned with CamScanner

| Առողջության Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն<br>Առանց վնասի բաղադրիչ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն<br>Վնասի բաղադրիչ | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (99,304) | - | (109,304) | **(208,608)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(99,304)** | **-** | **(109,304)** | **(208,608)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 716,197 | - | - | **716,197** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **716,197** | **-** | **-** | **716,197** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (614,696) | **(614,696)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 34,857 | **34,857** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (8,888) | - | **(8,888)** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(8,888)** | **(579,839)** | **(588,727)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (25,268) | - | - | **(25,268)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **690,929** | **(8,888)** | **(579,839)** | **102,202** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **690,929** | **(8,888)** | **(579,839)** | **102,202** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **591,625** | **(8,888)** | **(689,143)** | **(106,406)** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (718,774) | - | - | **(718,774)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 20,410 | - | - | **20,410** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 613,840 | **613,840** |
| **Ընդամենը դրամակն հոսքեր** | **(698,364)** | **-** | **613,840** | **(84,524)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | 5,997 | - | - | 5,997 |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | (112,736) | (8,888) | (75,303) | (196,927) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(106,739)** | **(8,888)** | **(75,303)** | **(190,930)** |



Scanned with CamScanner

| Առողջության Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (99,304) | - | (109,304) | (208,608) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(99,304)** | **-** | **(109,304)** | **(208,608)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 716,197 | - | - | 716,197 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **716,197** | **-** | **-** | **716,197** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (614,696) | (614,696) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 34,857 | 34,857 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (8,888) | - | (8,888) |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(8,888)** | **(579,839)** | **(588,727)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (25,268) | - | - | (25,268) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **690,929** | **(8,888)** | **(579,839)** | **102,202** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **690,929** | **(8,888)** | **(579,839)** | **102,202** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **591,625** | **(8,888)** | **(689,143)** | **(106,406)** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (718,774) | - | - | (718,774) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 20,410 | - | - | 20,410 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 613,840 | 613,840 |
| **Ընդամենը դրամակն հոսքեր** | **(698,364)** | **-** | **613,840** | **(84,524)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | 5,997 | - | - | 5,997 |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | (112,736) | (8,888) | (75,303) | (196,927) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(106,739)** | **(8,888)** | **(75,303)** | **(190,930)** |



Scanned with CamScanner

| Գույքի Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (156,180) | (4,361) | (25,783) | **(186,324)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(156,180)** | **(4,361)** | **(25,783)** | **(186,324)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 566,153 | - | - | **566,153** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **566,153** | **-** | **-** | **566,153** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (24,382) | **(24,382)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (68,628) | **(68,628)** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | 3,472 | - | **3,472** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **3,472** | **(93,010)** | **(89,538)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (111,151) | | | **(111,151)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **455,002** | **3,472** | **(93,010)** | **365,464** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | (5,451) | - | - | **(5,451)** |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **449,551** | **3,472** | **(93,010)** | **360,013** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **293,371** | **(889)** | **(118,793)** | **173,689** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (590,203) | - | - | **(590,203)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 130,934 | - | - | **130,934** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 33,749 | **33,749** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(459,269)** | **-** | **33,749** | **(425,520)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | (165,898) | (889) | (85,044) | **(251,831)** |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(165,898)** | **(889)** | **(85,044)** | **(251,831)** |



Scanned with CamScanner

| Դժբախտ պատահարներից ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (187,136) | - | (4,504) | (191,640) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(187,136)** | **-** | **(4,504)** | **(191,640)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 822,438 | - | - | 822,438 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **822,438** | **-** | **-** | **822,438** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (1,505) | (1,505) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 1,892 | 1,892 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (130) | - | (130) |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(130)** | **387** | **257** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (373,449) | - | - | (373,449) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **448,989** | **(130)** | **387** | **449,246** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **448,989** | **(130)** | **387** | **449,246** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **261,853** | **(130)** | **(4,117)** | **257,606** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (1,191,177) | - | - | (1,191,177) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 526,591 | - | - | 526,591 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 1,505 | 1,505 |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(664,586)** | **-** | **1,505** | **(663,081)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | (402,733) | (130) | (2,612) | (405,475) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(402,733)** | **(130)** | **(2,612)** | **(405,475)** |



Scanned with CamScanner

| Այլ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2025 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2025 | (46,832) | - | (4,408) | (51,240) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(46,832)** | **-** | **(4,408)** | **(51,240)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 136,133 | - | - | 136,133 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **136,133** | **-** | **-** | **136,133** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (7,561) | (7,561) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 135 | 135 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (685) | - | (685) |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(685)** | **(7,426)** | **(8,111)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (36,819) | - | - | (36,819) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **99,314** | **(685)** | **(7,426)** | **91,203** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **99,314** | **(685)** | **(7,426)** | **91,203** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **52,482** | **(685)** | **(11,834)** | **39,963** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (102,826) | - | - | (102,826) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 16,889 | - | - | 16,889 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 7,591 | 7,591 |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(85,937)** | **-** | **7,591** | **(78,346)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2025 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2025 | (33,455) | (685) | (4,243) | (38,383) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(33,455)** | **(685)** | **(4,243)** | **(38,383)** |



Scanned with CamScanner

Ապահովագրական պայմանագրերի գծով ակտիվների/(պարտավորությունների) մնացորդները և շարժը 2024թ.-ի ընթացքում ըստ ապահովագրական պայմանագրերի խմբերի ներկայացված է ստորև՝

| ԱՊՊԱ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2024 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2024 | (469,334) | (8,215) | (362,122) | (839,670) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(469,334)** | **(8,215)** | **(362,122)** | **(839,670)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 2,352,100 | - | - | **2,352,100** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **2,352,100** | **-** | **-** | **2,352,100** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (1,615,547) | **(1,615,547)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (41,860) | **(41,860)** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (7,297) | - | **(7,297)** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(7,297)** | **(1,657,407)** | **(1,664,704)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (458,448) | | - | **(458,448)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **1,893,652** | **(7,297)** | **(1,657,407)** | **228,948** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **1,893,652** | **(7,297)** | **(1,657,407)** | **228,948** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **1,424,318** | **(15,512)** | **(2,019,529)** | **(610,722)** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (3,183,663) | - | - | **(3,183,663)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 533,595 | - | - | **533,595** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 1,611,976 | **1,611,976** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(2,650,068)** | **-** | **1,611,976** | **(1,038,092)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31.12.2024 | - | - | - | |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31.12.2024 | (1,225,750) | (15,512) | (407,552) | (1,648,814) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(1,225,750)** | **(15,512)** | **(407,552)** | **(1,648,814)** |



Scanned with CamScanner

| ԿԱՄԿՈ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2024 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2024 | (60,213) | - | (3,753) | (63,966) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(60,213)** | **-** | **(3,753)** | **(63,966)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 244,885 | - | - | 244,885 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **244,885** | **-** | **-** | **244,885** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (33,994) | (33,994) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (60,193) | (60,193) |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (161) | - | (161) |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(161)** | **(94,187)** | **(94,348)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (61,425) | - | - | (61,425) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **183,460** | **(161)** | **(94,187)** | **89,112** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **183,460** | **(161)** | **(94,187)** | **89,112** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **123,247** | **(161)** | **(97,940)** | **25,146** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (355,605) | - | - | (355,605) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 97,260 | - | - | 97,260 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 81,121 | 81,121 |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(258,345)** | **-** | **81,121** | **(177,224)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31.12.2024 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31.12.2024 | (135,098) | (161) | (16,819) | (152,078) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(135,098)** | **(161)** | **(16,819)** | **(152,078)** |



Scanned with CamScanner

«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (շարունակություն)

| Առողջության Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2024 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2024 | (100,389) | - | (105,261) | (205,650) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(100,389)** | **-** | **(105,261)** | **(205,650)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 588,059 | - | - | 588,059 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **588,059** | **-** | **-** | **588,059** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (387,618) | (387,618) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (17,553) | (17,553) |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | - | - | - |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **-** | **(405,171)** | **(405,171)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (15,815) | - | - | (15,815) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **572,244** | **-** | **(405,171)** | **167,073** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **572,244** | **-** | **(405,171)** | **167,073** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **471,855** | **-** | **(510,432)** | **(38,577)** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (582,843) | - | - | (582,843) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 11,684 | - | - | 11,684 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 401,128 | 401,128 |
| **Ընդամենը դրամակն հոսքեր** | **(571,159)** | **-** | **401,128** | **(170,031)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2024 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2024 | (99,304) | - | (109,304) | (208,608) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(99,304)** | **-** | **(109,304)** | **(208,608)** |



Scanned with CamScanner

| Գույքի Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2024 | 41,736 | - | - | **41,736** |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2024 | (135,446) | - | (6,300) | **(141,746)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(93,710)** | **-** | **(6,300)** | **(100,010)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 400,889 | - | - | **400,889** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **400,889** | **-** | **-** | **400,889** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (18,862) | **(18,862)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | (10,307) | **(10,307)** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | (4,361) | - | **(4,361)** |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **(4,361)** | **(29,169)** | **(33,530)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (84,607) | | | **(84,607)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **316,282** | **(4,361)** | **(29,169)** | **282,752** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | (5,451) | - | - | **(5,451)** |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **310,831** | **(4,361)** | **(29,169)** | **277,301** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **217,121** | **(4,361)** | **(35,469)** | **177,291** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (459,580) | - | - | **(459,580)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 86,279 | - | - | **86,279** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 9,686 | **9,686** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(373,301)** | **-** | **9,686** | **(363,615)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31.12.2024 | | - | - | **-** |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31.12.2024 | (156,180) | (4,361) | (25,783) | **(186,324)** |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(156,180)** | **(4,361)** | **(25,783)** | **(186,324)** |



Scanned with CamScanner

| Դժբախտ պատահարներից Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| | - | - | - | - |
| | (77,636) | - | (5,108) | **(82,744)** |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(77,636)** | - | **(5,108)** | **(82,744)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 272,021 | - | - | **272,021** |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **272,021** | - | - | **272,021** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (2,250) | **(2,250)** |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 495 | **495** |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | - | - | - |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | - | - | **(1,755)** | **(1,755)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (109,795) | - | - | **(109,795)** |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **162,226** | - | **(1,755)** | **160,471** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **162,226** | - | **(1,755)** | **160,471** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **84,590** | - | **(6,863)** | **77,727** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| **Ստացված ապահովագրական վճարներ** | (414,036) | - | - | **(414,036)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 142,310 | - | - | **142,310** |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 2,359 | **2,359** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(271,726)** | - | **2,359** | **(269,367)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31.12.2024 | | | | |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31.12.2024 | (187,136) | - | (4,504) | (191,640) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(187,136)** | - | **(4,504)** | **(191,640)** |



Scanned with CamScanner

| Այլ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի պարտավորություն | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | | |
| Սկզբնական մնացորդ ակտիվների գծով առ 01.01.2024 | - | - | - | - |
| Սկզբնական մնացորդ պարտավորությունների գծով առ 01.01.2024 | (50,403) | - | (5,135) | (55,538) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(50,403)** | **-** | **(5,135)** | **(55,538)** |
| **Փոփոխություններ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն** | | | | |
| *Ապահովագրական հասույթ* | | | | |
| Պայմանագրեր հաշվառված վերափոխված հետընթաց մոտեցմամբ | 181,450 | - | - | 181,450 |
| **Ընդամենը ապահովագրական հասույթ** | **181,450** | **-** | **-** | **181,450** |
| *Ապահովագրական ծառայությունների գծով ծախս* | | | | |
| Կրած պահանջներ և այլ ծախսեր | - | - | (4,041) | (4,041) |
| Կրած պահանջների գծով պարտավորությունների փոփոխություններ | - | - | 328 | 328 |
| Անբարենպաստ պայմանագրերի գծով վնասների ճանաչում և ապաճանաչում | - | - | - | - |
| **Ընդամենը ապահովագրական ծառայությունների գծով ծախս** | **-** | **-** | **(3,713)** | **(3,713)** |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիա | (41,235) | - | - | (41,235) |
| **Ապահովագրական ծառայությունների գծով արդյունք** | **140,215** | **-** | **(3,713)** | **136,502** |
| Ապահովագրական պայմանգրերի գծով ֆինանսական եկամուտ (ծախս) | - | - | - | - |
| **Ընդամենը փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում** | **140,215** | **-** | **(3,713)** | **136,502** |
| **Մնացորդ մինչև դրամական հոսքերը** | **89,812** | **-** | **(8,848)** | **80,964** |
| *Դրամական հոսքեր* | | | | |
| Ստացված ապահովագրական վճարներ | (143,732) | - | - | (143,732) |
| Ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր | 7,088 | - | - | 7,088 |
| Կրած պահանջների և այլ ծախսերի գծով վճարումներ | - | - | 4,440 | 4,440 |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **(136,644)** | **-** | **4,440** | **(132,204)** |
| Վերջնական մնացորդ ակտիվների գծով առ 31 . 12.2024 | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ պարտավորությունների գծով առ 31 . 12.2024 | (46,832) | - | (4,408) | (51,240) |
| **Զուտ վերջնական մնացորդ** | **(46,832)** | **-** | **(4,408)** | **(51,240)** |



Scanned with CamScanner

## 17. Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվ/(պարտավորություն)

Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվների/(պարտավորությունների) մնացորդները և շարժը 2025թ.-ի ընթացքում ըստ ապահովագրական պայմանագրերի խմբերի ներկայացված է ստորև՝

| ԿԱՄԿՈ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2025 | 13,224 | - | 39,258 | (4,409) | **48,073** |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2025 | (23,244) | - | - | - | **(23,244)** |
| Զուտ սկզբնական մնացորդ | **(10,020)** | **-** | **39,258** | **(4,409)** | **24,829** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 57,511 | - | **57,511** |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (168,498) | - | - | - | **(168,498)** |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(168,498)** | **-** | **57,511** | **-** | **(110,987)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ֆինանսական եկամուտ/(ծախս) | (2,251) | - | - | - | **(2,251)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ոչ ֆինանսական եկամուտ/(ծախս) | - | - | - | 4,409 | **4,409** |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(170,749)** | **-** | **57,511** | **4,409** | **(108,829)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 187,525 | - | - | - | **187,525** |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (47,224) | - | **(47,224)** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **187,525** | **-** | **(47,224)** | **-** | **140,301** |
| **Զուտ մնացորդ** | **6,756** | **-** | **49,545** | **-** | **56,301** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2025 | 32,172 | - | 49,545 | - | **81,717** |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2025 | (25,416) | - | - | - | **(25,416)** |
| **Զուտ մնացորդ** | **6,756** | **-** | **49,545** | **-** | **56,301** |



Scanned with CamScanner

| Գույքի ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2025 | 4,033 | - | 18,147 | (2,317) | 19,863 |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2025 | (98) | - | - | - | (98) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **3,935** | **-** | **18,147** | **(2,317)** | **19,765** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 75,523 | - | 75,523 |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (185,465) | - | - | - | (185,465) |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(185,465)** | **-** | **75,523** | **-** | **(109,942)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ֆինանսական եկամուտ/(ծախս) | - | - | - | - | - |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ոչ ֆինանսական եկամուտ/(ծախս) | - | - | - | 2,317 | 2,317 |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(185,465)** | **-** | **75,523** | **2,317** | **(107,625)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 189,035 | - | - | - | 189,035 |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (1,268) | - | (1,268) |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **189,035** | **-** | **(1,268)** | **-** | **187,767** |
| **Զուտ մնացորդ** | **7,505** | **-** | **92,402** | **-** | **99,907** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2025 | 9,624 | - | 92,402 | - | 102,026 |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2025 | (2,119) | - | - | - | (2,119) |
| **Զուտ մնացորդ** | **7,505** | **-** | **92,402** | **-** | **99,907** |



Scanned with CamScanner

| Դծբախտ պատահարներից Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2025 | 4,507 | - | - | - | 4,507 |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2025 | (11,891) | - | - | - | (11,891) |
| Զուտ սկզբնական մնացորդ | **(7,384)** | - | - | - | **(7,384)** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 28,981 | - | 28,981 |
| Ապահովագրավճարներ վերաապահովագրողներին | (57,638) | - | - | - | (57,638) |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(57,638)** | - | **28,981** | - | **(28,657)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ Ֆինանսական եկամուտ/(ծախս) | (2,619) | - | - | - | **(2,619)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ոչ Ֆինանսական եկամուտ/(ծախս) | - | - | - | - | - |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(60,257)** | - | **28,981** | - | **(31,276)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 95,169 | - | - | - | **95,169** |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (28,981) | - | **(28,981)** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **95,169** | - | **(28,981)** | - | **66,188** |
| **Զուտ մնացորդ** | **27,528** | - | - | - | **27,528** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2025 | 27,642 | - | - | - | **27,642** |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2025 | (114) | - | - | - | **(114)** |
| **Զուտ մնացորդ** | **27,528** | - | - | - | **27,528** |



Scanned with CamScanner

| Այլ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2025 | 3,458 | - | 225 | - | 3,683 |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2025 | (713) | - | - | - | (713) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **2,745** | **-** | **225** | **-** | **2,970** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 4,637 | - | 4,637 |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (29,962) | - | - | - | (29,962) |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(29,962)** | **-** | **4,637** | **-** | **(25,325)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ֆինանսական եկամուտ/(ծախս) | | - | - | - | - |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ոչ ֆինանսական եկամուտ/(ծախս) | - | - | - | - | - |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(29,962)** | **-** | **4,637** | **-** | **(25,325)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 40,394 | - | - | - | 40,394 |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (4,862) | - | (4,862) |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **40,394** | **-** | **(4,862)** | **-** | **35,532** |
| **Զուտ մնացորդ** | **13,177** | **-** | **-** | **-** | **13,177** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2025 | 13,177 | - | - | - | 13,177 |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2025 | - | - | - | - | - |
| **Զուտ մնացորդ** | **13,177** | **-** | **-** | **-** | **13,177** |



Scanned with CamScanner

Վերաապահովագրական պայմանագրերի գծով ակտիվների/(պարտավորությունների) մնացորդները և շարժը 2024թ.-ի ընթացքում ըստ ապահովագրական պայմանագրերի խմբերի ներկայացված է ստորև՝

| ԿԱՄԿՈ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2024 | 2,637 | - | 36,503 | 143 | **39,284** |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2024 | - | - | - | - | **-** |
| Զուտ սկզբնական մնացորդ | **2,637** | - | **36,503** | **143** | **39,284** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 26,489 | - | **26,489** |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (92,074) | - | 0 | - | **(92,074)** |
| Ճշգրտումներ ապագա ծառայության հետ կապված | - | - | - | (4,553) | **(4,553)** |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(92,074)** | - | **26,489** | **(4,553)** | **(70,138)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ Ֆինանսական եկամուտ/(ծախս) | 702 | - | - | - | 702 |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(91,372)** | - | **26,489** | **(4,553)** | **(69,436)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 78,715 | - | - | - | **78,715** |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (23,734) | - | **(23,734)** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **78,715** | - | **(23,734)** | - | **54,981** |
| **Զուտ մնացորդ** | **(10,020)** | **-** | **39,258** | **(4,410)** | **24,829** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2024 | 13,224 | - | 39,258 | (4,410) | **48,073** |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2024 | (23,244) | - | - | - | **(23,244)** |
| **Զուտ մնացորդ** | **(10,020)** | - | **39,258** | **(4,410)** | **24,829** |



Scanned with CamScanner

| Գույքի Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2024 | (409) | - | 29,156 | 14 | 28,761 |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2024 | (13,672) | - | - | - | (13,672) |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **(14,081)** | - | **29,156** | **14** | **15,089** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 18,117 | (2,331) | 15,786 |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (107,336) | - | - | - | (107,336) |
| Ճշգրտումներ ապագա ծառայության հետ կապված | - | - | - | - | - |
| Վերաապահովագրության ձեռքբերման հետ կապված ծախսեր | - | - | - | - | - |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(107,336)** | - | **18,117** | **(2,331)** | **(91,550)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ Ֆինանսական եկամուտ/(ծախս) | 1,391 | - | - | - | 1,391 |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(105,945)** | - | **18,117** | **(2,331)** | **(90,159)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 123,961 | - | - | - | 123,961 |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (29,126) | - | (29,126) |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **123,961** | - | **(29,126)** | - | **94,835** |
| **Զուտ մնացորդ** | **3,935** | - | **18,147** | **(2,317)** | **19,765** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2024 | 4,033 | - | 18,147 | (2,317) | 19,863 |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2024 | (98) | - | - | - | (98) |
| **Զուտ մնացորդ** | **3,935** | - | **18,147** | **(2,317)** | **19,765** |



Scanned with CamScanner

| Դժբախտ պատահարներից Ապահովագրություն/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2024 | 700 | - | - | - | 700 |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2024 | (3,556) | - | - | - | (3,556) |
| Զուտ սկզբնական մնացորդ | **(2,856)** | **-** | **-** | **-** | **(2,856)** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 19,572 | - | **19,572** |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (35,078) | - | - | - | **(35,078)** |
| Ճշգրտումներ ապագա ծառայության հետ կապված | - | - | - | - | - |
| Վերաապահովագրության ձեռքբերման հետ կապված ծախսեր | - | - | - | - | - |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(35,078)** | **-** | **19,572** | **-** | **(15,506)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ Ֆինանսական եկամուտ/(ծախս) | 455 | - | - | - | 455 |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(34,623)** | **-** | **19,572** | **-** | **(15,051)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 30,095 | - | - | - | **30,095** |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (19,572) | - | **(19,572)** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **30,095** | **-** | **(19,572)** | **-** | **10,523** |
| **Զուտ մնացորդ** | **(7,384)** | **-** | **-** | **-** | **(7,384)** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2024 | 4,507 | - | - | - | **4,507** |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2024 | (11,891) | - | - | - | **(11,891)** |
| **Զուտ մնացորդ** | **(7,384)** | **-** | **-** | **-** | **(7,384)** |



Scanned with CamScanner

| Այլ/Հազար դրամ | Մնացորդային ծածկույթի Ակտիվ | | Կրած պահանջների գծով պարտավորություններ | | |
|---|---|---|---|---|---|
| | Առանց վնասի բաղադրիչ | Վնասի բաղադրիչ | Ապագա դրամական հոսքերի ներկա արժեք | Ոչ ֆինանսական ռիսկի ճշգրտում | Ընդամենը |
| Սկզբնական մնացորդային ակտիվ առ 01.01.2024 | 17,661 | - | - | - | **17,661** |
| Սկզբնական մնացորդային պարտավորություն առ 01.01.2024 | - | - | - | - | - |
| **Զուտ սկզբնական մնացորդ** | **17,661** | - | - | - | **17,661** |
| ***Փոփոխություններ համապարփակ ֆինանսական արդյունքում*** | | | | | |
| Կրած պահանջներում և ծախսերում վերաապահովագրողի մասը | - | - | 4,480 | - | **4,480** |
| Ապահովագրավճարներ վերապահովագրողներին | (19,804) | - | - | - | **(19,804)** |
| Ճշգրտումներ ապագա ծառայության հետ կապված | - | - | - | - | - |
| Վերաապահովագրության ձեռքբերման հետ կապված ծախսեր | - | - | - | - | - |
| **Զուտ վերաապահովագրական ծախս** | **(19,804)** | - | **4,480** | - | **(15,324)** |
| Վերաապահովագրական մնացորդների նկատմամբ ֆինանսական եկամուտ/(ծախս) | (78) | - | - | - | (78) |
| **Ընդամենը ազդեցություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում** | **(19,882)** | - | **4,480** | - | **(15,402)** |
| ***Դրամական հոսքեր*** | | | | | |
| Վճարված ապահովագրավճարներ | 4,966 | - | - | - | **4,966** |
| Ստացված փոխհատուցումներ կրած պահանջների գծով | - | - | (4,255) | - | **(4,255)** |
| **Ընդամենը դրամական հոսքեր** | **4,966** | - | **(4,255)** | - | **711** |
| **Զուտ մնացորդ** | **2,745** | - | **225** | - | **2,970** |
| Վերջնական մնացորդային ակտիվ առ 31.12.2024 | 3,458 | - | 225 | - | **3,683** |
| Վերջնական մնացորդային պարտավորություն առ 31.12.2024 | (713) | - | - | - | **(713)** |
| **Զուտ մնացորդ** | **2,745** | - | **225** | - | **2,970** |



Scanned with CamScanner

Պայմանագրային ծառայությունների մարժան 2025 և 2024թթ.-ի վերջի դրությամբ հետևյալն է՝

| 31.12.2025թ | մինչև 1 տարի<br>հազար դրամ | 1 տարուց 3 տարի<br>հազար դրամ | 3 տարուց ավել<br>հազար դրամ | Ընդամենը<br>հազար դրամ |
|---|---|---|---|---|
| **Ապահովագրական պայմանագրերի գծով** | (7,896) | (11,985) | | **(19,881)** |
| **Վերապահովագրական պայամանագրերի գծով** | (814) | (57,865) | | **(58,679)** |

| 31.12.2024թ | մինչև 1 տարի<br>հազար դրամ | 1 տարուց 3 տարի<br>հազար դրամ | 3 տարուց ավել<br>հազար դրամ | Ընդամենը<br>հազար դրամ |
|---|---|---|---|---|
| **Ապահովագրական պայմանագրերի գծով** | (394) | (23,745) | | **(24,139)** |
| **Վերապահովագրական պայամանագրերի գծով** | 14,881 | (57,811) | | **(42,930)** |

## 18. Այլ ակտիվներ

| | 31.12.2025թ<br>հազար դրամ | 31.12.2024թ<br>հազար դրամ |
|---|---|---|
| Տրված կանխավճարներ պահանջների կարգավորման գծով | 92,904 | 42,872 |
| Այլ կանխավճարներ | 51,665 | 24,611 |
| Սուբրոգացիաներ | 36,669 | 17,946 |
| Ստացվելիք գումարներ ապահովագրավճարների գծով | 28,023 | 19,404 |
| Գործակալներին տրամադրած կանխավճարներ | 11,749 | 9,752 |
| | **221,010** | **114,585** |



Scanned with CamScanner

## 19. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվների

| | Շենքեր | Գրասենյակային և կապի սարքավորումներ, համակարգիչներ | Փոխադրամիջոցներ | Ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| *Սկզբնական արժեք կամ Վերագնահատված արժեք* | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ | հազ. դրամ |
| **Առ 1-ը հունվարի 2024թ** | **400,000** | **89,827** | **34,069** | **47,148** | **571,044** |
| Ավելացումներ | - | 12,319 | 720 | 5,032 | **18,071** |
| Նվազեցումներ | - | (566) | (11,794) | (3,600) | **(15,960)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2024թ** | **400,000** | **101,580** | **22,995** | **48,580** | **573,155** |
| **Առ 1-ը հունվարի 2025թ.** | **400,000** | **101,580** | **22,995** | **48,580** | **573,155** |
| Ավելացումներ | - | 7,585 | - | 5,051 | **12,636** |
| Կուտակված մաշվածության հաշվին նվազեցում | (100,070) | - | - | - | **(100,070)** |
| Օտարում | - | (1,624) | - | (5,763) | **(7,387)** |
| Վերագնահատումից աճ | 447,070 | - | - | - | **447,070** |
| **Առ 31 դեկտեմբերի 2025թ.** | **747,000** | **107,541** | **22,995** | **47,868** | **925,404** |
| *Կուտակված մաշվածություն* | | | | | |
| **Առ 1-ը հունվարի 2024թ** | **80,892** | **83,613** | **9,935** | **36,417** | **210,857** |
| Ավելացումներ | 10,027 | 5,327 | 6,271 | 7,677 | **29,302** |
| Նվազեցումներ | - | (416) | (10,036) | (3,564) | **(14,016)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2024թ** | **90,919** | **88,524** | **6,170** | **40,530** | **226,143** |
| **Առ 1-ը հունվարի 2025թ.** | **90,919** | **88,524** | **6,170** | **40,530** | **226,143** |
| Ավելացումներ | 11,265 | 6,480 | 4,611 | 8,092 | **30,448** |
| Կուտակված մաշվածության նվազեցում | (100,070) | - | - | - | **(100,070)** |
| Օտարումներ | - | (1,624) | - | (5,763) | **(7,387)** |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2025թ.** | **2,114** | **93,380** | **10,781** | **42,859** | **149,134** |
| *Զուտ հաշվեկշռային արժեք* | | | | | |
| Առ 1-ը հունվարի 2024թ. | 319,108 | 6,214 | 24,134 | 10,731 | 360,187 |
| Առ 31-ը դեկտեմբերի 2024թ. | 309,081 | 13,056 | 16,825 | 8,050 | 347,012 |
| **Առ 31-ը դեկտեմբերի 2025թ.** | **744,886** | **14,161** | **12,214** | **5,009** | **776,270** |



Scanned with CamScanner

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 95,423  հազ. դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 93,590 հազար դրամ):

2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ այլ սահմանափակումների ենթակա հիմնական միջոցներ:

**Հիմնական միջոցների վերագնահատում**

2025թ.նոյեմբերի 24-ին Ընկերությունը Ընկերությունը իրականացրել է հիմնական միջոցների «շենքեր» դասի վերագնահատում, որը կատարվել է անկախ լիցենզավորված վերագնահատողի կողմից: Գույքի շուկայական արժեքը որոշելու համար անկախ գնահատողը օգտագործել է համեմատական և եկամտային մեթոդների համադրությունը:

Ընկերությունը կուտակված մաշվածությունը դուրս է գրել ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի հաշվին, և զուտ արժեքը վերաձևակերպել է վերագնահատված արժեքով:

Շենքեր դասի զուտ հաշվեկշռային արժեքը, սկզբնական արժեքի մոդելով հաշվառելու պարագայում կկազմեր 299,080 հազար դրամ 31 դեկտեմբեր 2025թ.դրությամբ:

Վերագնահատման արդյունքում առաջացած արժեքի աճը ճանաչվել է այլ համապարփակ արդյունքում և կուտակվել սեփական կապիտալում՝ «վերագնահատման պահուստ» հոդվածում:

Շենքերի իրական արժեքը դասակարգվում է իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

**20. Այլ պարտավորություններ**

| | 31.12.2025թ<br>հազար դրամ | 31.12.2024թ<br>հազար դրամ |
|---|---|---|
| Հաշվարկներ մատակարարների և կապալառուների հետ | 194,110 | 214,217 |
| ***Ընդամենը ֆինանսական պարտավորություններ*** | **194,110** | **214,217** |
| Աշխատակիցներին վճարվելիք գումարներ | 158,521 | 85,985 |
| Կրեդիտորական պարտքեր արտոնյալ բաժնետերերին | 52,740 | 52,740 |
| Կրեդիտորական պարտքեր բյուջեին | 13,925 | 8,798 |
| | 38,901 | 22,471 |
| | **458,197** | **384,211** |

**21. Սեփական կապիտալ**

Ընկերության թողարկված բաժնետիրական կապիտալը բաղկացած է 2,444 հազար սովորական բաժնետոմսից և 586 հազար արտոնյալ բաժնետոմսից: Բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 1,000,000 դրամ:
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր բաժնետիրական կապիտալը կազմում է 3,030,000 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 2,444 հազար սովորական բաժնետոմս և 586 հազար արտոնյալ բաժնետոմս):



Scanned with CamScanner

**Սովորական բաժնետոմսեր**

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերը հավասար իրավունքներ ունեն Ընկերության մնացորդային ակտիվների նկատմամբ:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

**Հետ չգնվող արտոնյալ բաժնետոմսեր**

Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք չունեն փոխարկել կամ հետ գնել բաժնետոմսերը, սակայն իրավունք ունեն ստանալ անվանական արժեքի 9%-ի չափով տարեկան շահաբաժիններ: Եթե շահաբաժինը չի վճարվում, ապա արտոնյալ բաժնետոմսերը տալիս են քվեարկելու իրավունք մինչև բաժնետերերի հաջորդ տարեկան ժողովը: Այնուամենայնիվ, շահաբաժինները կուտակային չեն:

Լուծարման դեպքում արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն առաջինն են ստանում հայտարարված չվճարված շահաբաժինները և արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքը: Այնուհետև, բոլոր բաժնետերերը՝ սովորական և արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը հավասարապես մասնակցում են մնացած ակտիվների բաշխմանը:

**Շահաբաժիններ**

Վճարման ենթակա շահաբաժինները սահմանափակվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված Ընկերության առավելագույն չբաշխված շահույթի չափով:

Համաձայն կազմակերպության կանոնադրության ՝ Կազմակերպությունը պետք է հաշվեգրի և վճարի շահաբաժիններ արտոնյալ բաժնետերերին: Շահաբաժինների մեծությունը պայմանավորված է արտոնյալ բաժնետոմսերի քանակով և եկամտաբերությամբ, որը սահմ անված է կանոնադրությամբ:

2025թ-ին և 2024թ.-ին հայտարարված շահաբաժինների մնացորդները ներկայացված են Ծանոթագրություն 21-ում:

**Վերագնահատման պահուստ**

Վերագնահատման պահուստն իրենից ներկայացնում է հիմնական միջոցների «Շենքեր և շինություններ» դասի վերագնահատումից աճի մեծությունը առանց հարկերի:

**22. Կապիտալի կառավարում**

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից: Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է օրենսդրությամբ ապահովագրական ընկերությունների համար որպես կապիտալի սահմանված հոդվածները:

ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ ապահովագրական ընկերությունների նվազագույն ընդհանուր կապիտալը պետք է կազմի 1,500,000 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,500,000 հազար դրամ):



Scanned with CamScanner

Բացի այդ, կապիտալի համար գործող ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն, Ընկերությունը պետք է ապահովի, որպեսզի կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցությունը («կապիտալի համարժեքության ցուցանիշ») բարձր լինի սահմանված նվազագույն սահմանաչափից: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս նվազագույն սահմանաչափը կազմում է 1 (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1):

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է ՀՀ ԿԲ-ի պահանջների համաձայն հաշվարկված կապիտալի համարժեքության ցուցանիշը դեկտեմբերի 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | 31.12.2025թ հազար դրամ (աուդիտի չենթարկված) | 31.12.2024թ հազար դրամ (աուդիտի չենթարկված) |
|---|---|---|
| Կանոնադրական կապիտալ | 3,030,000 | 3,030,000 |
| Կուտակված օգուտ/(վնաս) ըստ ՀՀ ԿԲ-ի հաշվապահական հաշվառման սկզբունքների՝ հանած ՀՀ ԿԲ-ի կանոնակարգերով պահանջվող նվազեցումները | 143,003 | (533,727) |
| Ընդամենը կապիտալ | 3,173,003 | 2,496,273 |
| **Պահանջվող կապիտալի մեծություն** | **2,359,154** | **1,753,366** |
| **Կապիտալի համարժեքության ցուցանիշ** | **1.34** | **1.42** |

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության մոտեցումը կապիտալի կառավարման նկատմամբ չի փոխվել:

**23. Պայմանական դեպքեր**
**Պայմանական պարտավորություններ**

Ժամանակ առ ժամանակ, բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ ներկայացվում են հայցեր: Հիմք ընդունելով իր գնահատումները և ներքին ու արտաքին մասնագիտական խորհրդատվությունը՝ ղեկավարությունը գտնում է, որ բացի այս ֆինանսական հաշվետվություններում որպես պահուստ գրանցվածների, Ընկերությունն այլ էական վնաս չի կրի:

**Հարկային պարտավորվածություններ**

ՀՀ հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիներ համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ-ի ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն՝ հարկային օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները պարտադրում են հարկ վճարողներին պատրաստել տրանսֆերային գնագոյացման փաստաթղթեր վերահսկվող գործարքների համար և սահմանում են լրացուցիչ հարկերի և տոկոսների հաշվեգրման հիմքեր և մեխանիզմներ, եթե վերահսկվող գործարքների գները տարբերվեն շուկայական գներից:



Scanned with CamScanner

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը գերազանցում 200 միլիոն դրամը հարկային տարում:

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունը այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը ներդրել է ներքին վերահսկողության համակարգ՝ տրանսֆերային գնագոյացման ընթացիկ օրենսդրության պահանջներին համապատասխանություն ապահովելու համար: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

### 24. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24–ի՝ «Փոխկապակցված կողմերի բացահայտում», կողմերը համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա:

#### Գործարքներ տնօրենների և վերադաս ղեկավարության հետ

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը կապակցված կողմերի հետ իրականացրել է հետևյալ գործարքները.

Ստորև ներկայացված է վարչական ծախսերի կազմում ներառված Տնօրենների խորհրդի անդամների և վերադաս ղեկավարության ընդհանուր վարձատրությունը (Ծանոթագրություն 10):

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Աշխատավարձ և այլ հատուցումներ | 137,127 | 112,186 |
| | 137,127 | 112,186 |

Ստորև ներկայացված են տնօրենների և վերադաս ղեկավարության հետ գործարքների արդյունքները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Համախառն ապահովագրավճարներ | 1,770 | 419 |
| | 1,770 | 419 |



Scanned with CamScanner

**Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ**

Այլ կապակցված կողմերի հետ գործարքները հիմնականում ներառում են վերջնական բաժնետերերի վերահսկողության ներքո գտնվող ընկերությունների հետ իրականացված գործարքները: Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | 31.12.2025թ | 31.12.2024թ |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Բանկային ավանդներ | 465,901 | 424,898 |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 52,561 | 21,545 |
| Վճարվելիք գումարներ ապվճարների մասով | 145 | 145 |
| | **518,607** | **446,588** |

Ստորև ներկայացված են այլ կապակցված կողմերի հետ գործարքների արդյունքները 2025թ. դեկտեմբերի 31-ի և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար:

| | 2025թ. | 2024թ. |
|---|---|---|
| | հազար դրամ | հազար դրամ |
| Համախառն ապվճարներ | 146,368 | 127,178 |
| Տոկոսային եկամուտ | 42,867 | 38,239 |
| Դադարեցված ապահովագրավճարներ և ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի գծով պահուստ | (2,376) | (2,208) |
| Այլ բանկային ծախսեր | (900) | (1,047) |
| | **185,959** | **162,162** |



Scanned with CamScanner

## 25. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Ընկերության կողմից կիրառվել է հետևողականորեն այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

### 25.1 Արտարժույթով գործառնություններ

Արտարժույթով գործառնությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործառնության ամսաթվի փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները վերահաշվարկվում են գործառնության ամսաթվի փոխարժեքով: Արտարժույթի վերահաշվարկից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որում առաջանում են:

Ստորև ներկայացված են համապատասխան փոխանակման փոխարժեքները:

| | Միջին փոխարժեք | | Սփոթ փոխարժեք | |
|---|---|---|---|---|
| | 2025թ. | 2024թ. | 31.12.2025թ. | 31.12.2024թ. |
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 387.01 | 392.73 | 381.36 | 396.56 |
| ՀՀ դրամ/1 Եվրո | 436.98 | 424.86 | 449.01 | 413.89 |

### 25.2 Ապահովագրական պայմանագրեր

#### 1) Ապահովագրական պայմանագրերի և պորտֆելների առանձնացում

*1.1 Ապահովագրական պայմանագրերի առանձնացում*

Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 17-ը՝ իր կողմից թողարկվող ապահովագրության պայմանագրերի, ինչպես նաև իր կողմից պահվող վերաապահովագրության պայմանագրերի նկատմամբ:

*1.2 Ապահովագրական պայմանագրերի համախմբում*

Ընկերությունը միևնույն և (կամ) կապակցված կողմերի հետ կնքված ապահովագրության պայմանագրերի փաթեթները, որոնք հետապնդում են կամ նախատեսված են հետապնդելու ընդհանուր առևտրային արդյունք, դիտարկում է որպես մեկ ամբողջականություն:

*1.3 Ապահովագրական պայմանագրի ՝բաղադրիչների տրոհումը*

Ընկերությունը ստանդարտի պահանջներին համապատասխան առանձնացնում է ապահովագրական պայմանագրից այն բաղադրիչները, որոնք հաշվառվում են այլ ստանդարտի շրջանակներում և հաշվառում են համաձայն կիրառելի ստանդարտի: Մասնավորապես, ապահովագրական պայմանագրից առանձնացվում են ֆինանսական գործիքները, եթե այդպիսիք կան, և հաշվառվում են ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան:

Ընկերությունը ապահովագրական պայմանագրերից առանձնացնում է առանձնացվելի ապրանքներ կամ ոչ ապահովագրական ծառայություններ փոխանցելու ցանկացած պայմանավորվածություն և հաշվառում ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան, եթե այդպիսիք կան:

*1.4 Ապահովագրական պայմանագրերի պորտֆելներ*

Ընկերությունը առանձնացնում է ապահովագրության պայմանագրերի պորտֆելներ: Պորտֆելը բաղկացած է համանման ռիսկերի ենթակա և միասին կառավարվող պայմանագրերից:



Scanned with CamScanner

Հիմնականում Ընկերությունը միևնույն ապրանքային ուղղությունում ներառված պայմանագրերը համախմբում է նույն պորտֆելում, քանի որ գնահատում է, որ միևնույն ապրանքային ուղղությունում ներառված պայմանագրերը սովորաբար ունեն միևնույն ռիսկեր և կառավարվում են միասին: Կարող են լինել դեպքեր, երբ միևնույն ապրանքային խմբում ներառված պայմանագրերը ունեն տարբեր ռիսկեր, որի ժամանակ Ընկերությունը պորտֆելների առանձնացումը կատարում է համաձայն ներառված ռիսկերի: Պորտֆելների բաժանումը իրականցվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ընկերությունը թողարկված ապահովագրության պայմանագրերի պորտֆելները բաժանում է հետևյալ խմբերի.

ա) պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին անբարենպաստ են

բ) պայմանագրերի խումբ, որոնք սկզբնական ճանաչման պահին նշանակալի հավանականություն չկա, որ կդառնան անբարենպաստ

գ) պորտֆելի մնացած պայմանագրերի խումբ

Սկզբնական ճանաչման պահին ապահովագրության պայմանագիրն անբարենպաստ է, եթե պայմանագրին վերագրելի պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերի, ձեռքբերման գծով նախկինում ճանաչված դրամական հոսքերի և պայմանագրից առաջացող ցանկացած այլ դրամական հոսքերի՝ սկզբնական ճանաչման պահին ընդհանուր գումարը հանգեցնում է զուտ արտահոսքի:

Ապահովագրության պայմանագրերի խումբը հետագա չափման պահին կարող է դառնալ անբարենպաստ (կամ ավելի անբարենպաստ), եթե տեղի են ունեցել ոչ բարենպաստ փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք վերագրվել են խմբին:

Ընկերությունը անբարենպաստ պայմանագրերի խմբի գծով զուտ արտահոսքերի հետ կապված՝ շահույթում կամ վնասում ճանաչում է կորուստ, որի արդյունքում խմբի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը հավասարվում է պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերին, իսկ խմբի պայմանագրային ծառայությունների մարժան հավասարվում է զրոյի:

Վերոնշյալ պորտֆելների բաժանման ժամանակ, Ընկերությունը կիրառում է առկա պայմանագրերի և գործընկերների մասին տեղեկատվությունը, Ընկերության գործունեության պատմական տվյալները, ինչպես նաև շուկայական տեղեկատվությունը:

Նոր թողարկված պայմանագրերի պորտֆելների բաժանման չափանիշների սահմանումը կատարվում է Ընկերության ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ հիմնվելով՝ Ընկերության ներքին հաշվետվողականության և արտաքին տեղեկատվությունների վրա:

Ընկերությունը պորտֆելները բաժանում է ենթախմբերի հիմնվելով թողարված պայմանագրերի ժամկետայնության վրա: Միևնույն ենթախմբում ներառում է յուրաքանչյուր հաշվետու տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը թողարկված պայմանագրերը:

Խմբերը ձևավորվում են ճանաչման պահին և որից հետո խմբերի կազմը չի փոխվում:

**2) Ապահովագրական պորտֆելների ճանաչումը, չափումը և ապաճանաչումը**

***Ընդհանուր ապահովագրության պայմանագրեր***

***2.1 Ճանաչում***

Ընկերությունը ապահովագրական պայմանագրերի խումբը ճանաչում է հետևյալներից ամենավաղ ամսաթվին.

ա) պայմանագրերի խմբի ծածկույթի ժամանակահատվածի սկիզբ,



Scanned with CamScanner

բ) ամսաթիվ, երբ խմբի ապահովադրից առաջին վճարումը դառնում է ստացման ենթակա, և

գ) անբարենպաստ պայմանագրերի խմբի համար, երբ խումբը դառնում է անբարենպաստ:

*2.2 Չափում*

Ընկերությունը ապահովագրական պայմանագրերի պորտֆելների հաշվառումը իրականացնում է պարզեցված մոդելով՝ Ապահովագրական վճարի բաշխման մոդելով (Այսուհետ՝ PAA), եթե խմբի ձևավորման ժամանակ.

ա) Ընկերությունը հիմնավոր ակնկալիք ունի, որ այսպիսի հաշվառման արդյունքը էականորեն չի տարբերվի ընդհանուր չափման մոտեցումից կամ

բ) խմբի յուրաքանչյուր պայմանագրի ծածկույթի ժամանակահատվածը մեկ տարի է կամ ավելի քիչ:

Այլապես Ընկերությունը Ապահովագրական պայմանագրերի պորտֆելների հաշվառումը իրականացնում է Ընդհանուր չափման մոդելով:

*Ապահովագրական վճարի բաշխման մոտեցում (PAA)*

Ապահովագրական վճարի բաշխման մոտեցումը կիրառելիս՝ Ընկերությունը մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը չափում է հետևյալ կերպ.

ա) սկզբնական ճանաչման պահին պարտավորության հաշվեկշռային արժեքը հետևյալն է՝

(i) ապահովագրական վճարներ՝ ստացված սկզբնական ճանաչման պահին, եթե այդպիսիք առկա են,

(ii) հանած այդ պահի դրությամբ ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքեր,

(iii) գումարած կամ հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի գծով ճանաչված ակտիվի կամ պարտավորության այդ պահին մնացորդ:

բ) հետագա յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ պարտավորության հաշվեկշռային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքն է.

(i) գումարած ժամանակաշրջանի ընթացքում ստացված ապահովագրական վճարները,

(ii) հանած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը,

(iii) գումարած ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերի ամորտիզացիային առնչվող ցանկացած գումար, որը հաշվետու ժամանակաշրջանում ճանաչվել է որպես ծախս,

(iv) հանած այդ ժամանակաշրջանում տրամադրված ծածկույթի գծով որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը հաշվարկում է հետևյալների միջև տարբերությունը.

ա) մնացորդային ծածկույթի գծով պարտավորության հաշվեկշռային արժեք,

բ) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքեր:

Այն չափով որով բ) կետով հաշված մնացորդը գերազանցում է ա) կետով հաշված մնացորդին, Ընկերությունը շահույթում կամ վնասի մասին հաշվետվությունում վնաս է ճանաչում և ավելացնում է մնացորդային ծածկույթի գծով պարտավորությունը:

Ընկերությունը ընտրել է ապահովագրության ձեռքբերման հետ կապված դրամական հոսքերը ճանաչել ծախս՝ ապահովագրության ծառայության տրամադրման ժամկետին համամասնորեն:



Scanned with CamScanner

Կրած պահանջների գծով պարտավորության հաշվառումը, որը ներկայացնում է արդեն մատուցված ծառայությունների մասով ակնկալվող դրամական հոսքերը, հաշվառվում է նույն ձևով, ինչպես Ընդհանուր չափման մոդելում, բացառությամբ փողի ժամանակային արժեքի ճշգրտման: Այն դեպքում, երբ ակնկալվում է, որ դրամական հոսքերը կիրականացվեն մեկ տարվա մեջ, ֆինանսական ռիսկի ճշգրտում չի իրականացվում:

*Ընդհանուր չափման մոդել (GMM)*

Այն պորտֆելների համար, որոնք հաշվառվում են ընդհանուր չափման մոդելով սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը ապահովագրության պայմանագրերի խումբը չափում է հետևյալ մեծությունների հանրագումարով.

ա) Մնացորդային ծածկույթի գծով պարտավորություն, որը բաղկացած է.

(i) ապագա դրամական հոսքերի ներկա արժեքից

(ii) պայմանագրային ծառայությունների մարժայից

բ) Կրած պահանջների գծով պարտավորությունից, որը ներկայացնում է արդեն մատուցված ծառայությունների մասով ակնկալվող դրամական հոսքերը :

*Ապագա դրամական հոսքերի գնահատումներ*

Ընկերությունը ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործում է հասանելի ողջամիտ և հիմնավոր տեղեկատվություն:

Ապագա դրամական հոսքերի գնահատման համար Ընկերությունը հիմնվում է նախկին փորձի, ակնկալվող ծախսերի և փոփոխությունների վրա:

Ընկերությունը՝ ձեռք բերված տեղեկատվության հիման վրա, գնահատում է գործող պայմանագրերի գծով ապագա վճարումների գումարներն ու հավանականությունը, ներառելով.

ա) տեղեկատվություն ապահովադրի կողմից արդեն ներկայացված պահանջների վերաբերյալ,

բ) այլ տեղեկատվություն ապահովագրության պայմանագրերի հայտնի կամ գնահատված բնութագրերի վերաբերյալ,

գ) պատմական տվյալներ Ընկերության սեփական փորձի վերաբերյալ: Պատմական տվյալները ճշգրտվում են ընթացիկ պայմաններն արտացոլելու համար:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության ղեկավարությունը գնահատում է ապագա դրամական հոսքերի բնույթն ու մեծությունը և բաշխում ապահովագրական պորտֆելների միջև:

Ապահովագրության պայմանագրի շրջանակներում գտնվող դրամական հոսքերն այն դրամական հոսքերն են, որոնք ուղղակիորեն կապված են պայմանագրի կատարման հետ: Պայմանագրի շրջանակներում գտնվող դրամական հոսքերը ներառում են.

ա) ապահովագրական վճարներ (ներառյալ՝ ապահովագրական վճարների ճշգրտումներն ու ապահովագրական վճարների մաս-մաս վճարումները) ապահովադրից և լրացուցիչ դրամական հոսքեր, որոնք բխում են այդ ապահովագրական վճարներից,

բ) վճարումներ ապահովադրին (կամ նրա անունից), ներառյալ՝ պահանջներ, որոնք արդեն ներկայացվել են, բայց դեռևս չեն վճարվել (այսինքն՝ ներկայացված պահանջներ), պատահարների գծով կրած պահանջներ, որոնք տեղի են ունեցել, սակայն որոնց գծով պահանջներ դեռ չեն ներկայացվել և ապագա բոլոր պահանջները, որոնց գծով Ընկերությունն ունի իրական պարտականություն,

գ) վճարումներ ապահովադրին (կամ նրա անունից), որոնք փոփոխվում են՝ հիմքում ընկած հոդվածների գծով հատույցներից կախված,



Scanned with CamScanner

դ) ապահովագրության ձեռքբերման հետ կապված այն դրամական հոսքերի բաշխում, որոնք վերագրելի են պորտֆելին, որին պատկանում է տվյալ պայմանագիրը,

ե) պահանջների մշակման ծախսումներ (այսինքն՝ ծախսումներ, որոնք կրելու է Ընկերությունը ապահովագրության գործող պայմանագրերի ներքո պահանջների հետազոտման, ընթացքի ապահովման և բավարարման ժամանակ, ներառյալ՝ իրավաբանների և փորձագետ-գնահատողների վճարները, ինչպես նաև պահանջների հետազոտման և պահանջների գծով վճարումների ընթացքի ապահովման հետ կապված ներքին ծախսումները),

զ) ծախսումներ, որոնք Ընկերությունը կրելու է պայմանագրային հատուցները բնաիրային տեսքով վճարելիս,

է) ապահովագրական պոլիսների կառավարման և սպասարկման հետ կապված ծախսումներ, ինչպիսիք են ապահովագրական վճարների գծով հաշիվների դուրսգրման ծախսումները և պոլիսի փոփոխությունների ձևակերպումները (օրինակ՝ վերանայումներն ու վերականգնումները): Այսպիսի ծախսումները ներառում են նաև պարբերական միջնորդավճարները, որոնք ակնկալվում է, որ կվճարվեն միջնորդներին, եթե կոնկրետ ապահովադիրը ապահովագրության պայմանագրի շրջանակներում շարունակի վճարել ապահովագրական վճարները,

ը) ապագա պահանջների գծով փոխհատուցումներից պոտենցիալ դրամական ներհոսքեր (ինչպիսիք են վթարված գույքի իրացումը կամ սուբրոգացիան (ապահովագրական հատուցումից հետո հետադարձ պահանջի իրավունքով հատուցված գումարը հետ վերադարձնելու պահանջ)), որոնք ծածկվում են առկա ապահովագրության պայմանագրերով, ինչպես նաև անցյալ պահանջների գծով փոխհատուցումներից պոտենցիալ դրամական ներհոսքեր՝ այն չափով, որքանով չեն բավարարում որպես առանձին ակտիվ ճանաչելու չափանիշներին,

թ) ուղղակիորեն պայմանագրի կատարմանը վերագրելի հաստատուն և փոփոխուն վերադիր ծախսումների (ինչպիսիք են հաշվապահական հաշվառման վարման, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների և սպասարկման, շենքերի մաշվածության, վարձակալության և տեխնիկական սպասարկման ու կոմունալ ծառայությունների գծով ծախսումները) բաշխումը: Նման վերադիր ծախսումները պայմանագրերի խմբին են բաշխվում պարբերական ու խելամիտ հիմունքով և հետևողականորեն կիրառվում են համանման բնութագրեր ունեցող մնացած բոլոր ծախսումների նկատմամբ,

ժ) պայմանագրով սահմանված՝ ապահովադրին հատուկ վճարման ենթակա ցանկացած այլ ծախսումներ:

***Զեղչման դրույքներ***
Ընկերությունը ճշգրտում է ապագա դրամական հոսքերի գնահատումները՝ փողի ժամանակային արժեքով ու այդ դրամական հոսքերի հետ կապված ֆինանսական ռիսկերն արտացոլելու համար, այն չափով, որքանով ֆինանսական ռիսկերը չեն ներառվել ապագա դրամական հոսքերի գնահատումներում:

Ընկերությունը գնահատում է, որ կիրառելի ժամանակահատվածում ՀՀ-ում թողարկված ավանդների միջին տոկոսադրույքները լավագույնս են արտացոլում փողի ժամանակային արժեքը Ընկերության համար:

***Ոչ ֆինանսական ռիսկի գծով ռիսկի ճշգրտում***
Ընկերությունը ճշգրտում է ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի գնահատումը՝ արտացոլելու փոխհատուցումը, որը Ընկերությունը պահանջում է ոչ ֆինանսական ռիսկի հետևանքով առաջացած՝ դրամական հոսքերի գումարի և ժամկետի վերաբերյալ անորոշությունը կրելու համար:

Ոչ ֆինանսական ռիսկի հաշվարկի համար Ընկերությունը ընտրել է VAR մեթոդը որի հիմքում օգտագործվել է Մոնտե-Կարլոյի մեթոդը:

Մոնտե-Կարլոյի մեթոդի շրջանակներում ռիսկի վերլուծությունը իրականացվում է հնարավոր արդյունքների մոդելավորման օգնությամբ: Այդ մոդելներում ցանկացած գործոն, որին բնորոշ է



Scanned with CamScanner

անորոշությունը, փոխարինվում է արժեքների միջակայքով՝ հավանականությունների բաշխմամբ: Այնուհետև, իրականացվում է արդյունքների հաշվարկ, ընդ որում ամեն անգամ օգտագործվում է հավանականության ֆունկցիաների պատահական արժեքների մեկ այլ հավաքածու: Մեթոդի իմաստը բոլոր հնարավոր իրականացված գործընթացների իմիտացիայում է, ինչի համար մոդելավորվում է այդ գործընթացը:

Մոնտե-Կարլոյի մեթոդով պլանավորումը ավելի ամբողջական պատկերացում է տալիս հնարավոր իրադարձության մասին: Այն հնարավորություն է տալիս դատել ոչ միայն նրա մասին, թե ինչ կարող է տեղի ունենալ, այլն թե ինչքան է այս կամ այն արդյունքի հավանականությունը:

Մեթոդի օգտագործման ժամանակ ստացված տվյալների բնույթը հնարավորություն է տալիս ստեղծել տարբեր հետևանքների գրաֆիկներ, ինչպես նաև դրանց կայանալու հավանականություններ: Մեթոդի առավելությունը նրանում է, որ վերջնական հաշվարկներից հետո հնարավոր է տեսնել, թե որ գործոններն են ամենից շատ ազդել վերջնական արդյունքի վրա:

Ներքոնշյալ՝ մոդելում կիրառվող հասկացություններ են, որոնք պետք է ընթերցվեն յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կատարված հաշվարկների հետ:

Premium-մեկ պոլիսի միջին գին ըստ խմբի,

UW LR(Underwriting loss rate)- խմբի վնասաբերություննն է,

Internal expenses- Այլ ներքին ծախսեր,

Commision (Com)- միջնորդավճարներ (միջնորդավճար/համախառն ապ. վճար),

St (standard deviation)- Ստանդարտ շեղում,

CoV- Coefficient of Variation UW LR,

St (standard deviation)- Ստանդարտ շեղում,

Ստանդարտ շեղումը օգտագործվում է միջինից ցրվածությունը չափելու համար

$$St = \sqrt{\frac{\Sigma(X - \bar{X})^2}{n - 1}}$$

X- Միավորի հարժեքն է մեր ընտրանքում,

$\bar{X}$- Ընտրանքի ամբողջ միավորների միջին արժեքն է,

n- Ընտրանքում միավորների քանակն է,

CoV- Coefficient of Variation UW LR- Հաշվարկ,

$$Cov = \frac{\sigma}{\mu}$$

Որտեղ՝

$\sigma$- շարքի ստանդարտ շեղումն է

$\mu$-շարքի միջինն է

UW LR- խմբի վնասաբերություն



Scanned with CamScanner

Խմբի վնասաբերությունը հաշվարկվում է հատուցումներին գումարելով յուրաքանչյուր խմբին վերաբերվող ստորև թվարկված ծախսերը ամսական կտրվածքով, որի արդյունքը հարաբերվում է համախառն ապահովագրավճարներին՝ ամսական կտրվածքով:

$$UW\ LR = \frac{\text{Հատուցումներ + հատուցման հետ կապված անմիջական ծախսեր}}{\text{Համախառն ապահովագրավճար}}$$

Internal expenses- Այլ ներքին ծախսեր

Ներքին ծախսերը Ընկերության այլ ծախսերի և աշխատակիցներին վճարված աշխատավարձի հանրագումարն է հարաբերած համախառն ապահովագրավճարներին ամսական կտրվածքով:

$$IE = \frac{\text{Աշխատավարձի գծով ծախս +այլ ծախս}}{\text{Համախառն ապահովագրավճար}}$$

Commision (Com)- միջնորդավճարներ

Միջնորդավճարների ցուցանիշը հաշվարկվում է միջնորդավճարները հարաբերելով համախառն ապահովագրավճարներին ամսական կտրվածքով:

$$Comm. = \frac{\text{Միջնորդավճար}}{\text{Համախառն ապահովագրավճար}}$$

***Պայմանագրային ծառայությունների մարժա***

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային ծառայությունների մարժան իրենից ներկայացնում է ապահովագրության պայմանագրերի խմբի գծով շահույթը, որը շահույթում կամ վնասում դեռևս չի ճանաչվել, քանի որ վերաբերում է խմբի պայմանագրերի ներքո մատուցվելիք ապագա ծառայություններին: Ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հաշվեկշռային արժեքը հավասար է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ հաշվեկշռային արժեքին՝ ճշգրտված հետևյալ մեծություններով.

ա) խմբում ավելացված նոր պայմանագրերի ազդեցություն,

բ) հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքի նկատմամբ հաշվեգրված տոկոսներ,

գ) փոփոխություններ պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում, որոնք առնչվում են ապագա ծառայություններին,

(i) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի ավելացումները գերազանցում են պայմանագրային ծառայությունների մարժայի հաշվեկշռային արժեքը, առաջացնելով վնաս, կամ

(ii) պայմանագրի կատարման գծով դրամական հոսքերում այդպիսի նվազեցումները բաշխվում են մնացորդային ծածկույթի գծով պարտավորության վնասի բաղադրիչին՝

դ) պայմանագրային ծառայությունների մարժայի վրա արտարժույթի փոխարժեքի տարբերությունների ազդեցություն, և

ե) ժամանակաշրջանի ընթացքում փոխանցված ծառայությունների արդյունքում, որպես ապահովագրական հասույթ ճանաչված գումար, որը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ (նախքան բաշխումը) պայմանագրային ծառայությունների մարժայի մնացորդը բաշխելով ընթացիկ և մնացորդային ծածկույթի ժամանակահատվածի վրա:

Ապահովագրության պայմանագրերի խմբի գծով պայմանագրային ծառայությունների մարժայի գումարը ճանաչվում է յուրաքանչյուր ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ արտացոլելու տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ապահովագրության պայմանագրերի խմբի ներքո մատուցված ծառայությունները: Այդ գումարը որոշվում է հետևյալ կերպ՝



Scanned with CamScanner

ա) նույնականացնելով խմբում ծածկույթի միավորները: Խմբում ծածկույթի միավորների թիվը խմբի պայմանագրերի ներքո տրամադրված ծածկույթների քանակն է, որը որոշվում է ըստ յուրաքանչյուր պայմանագրի՝ հաշվի առնելով դրա գծով տրամադրված հատուցումների քանակը և ծածկույթի ակնկալվող տևողությունը,

բ) հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պայմանագրային ծառայությունների մարժան (նախքան որևէ գումար շահույթում կամ վնասում ճանաչելը՝ արտացոլելու ժամանակաշրջանի ընթացքում մատուցված ծառայությունները) հավասարապես բաշխելով ընթացիկ ժամանակաշրջանում տրամադրված և ապագայում տրամադրվելիք յուրաքանչյուր ծածկույթի միավորի վրա,

գ) ժամանակաշրջանի ընթացքում տրամադրված ծածկույթի միավորներին բաշխված գումարը ճանաչելով շահույթում կամ վնասում:

***Կրած պահանջների գծով պարտավորություն***

Կրած պահանջների գծով պարտավորությունը, որը ներկայացնում է արդեն մատուցված ծառայությունների մասով ակնկալվող դրամական հոսքերը, բաժանվում է 3 խմբի.

- Ներկայացված և կարգավորված հատուցումների գծով պարտավորություն

Ներկայացված և կարգավորված հատուցումների գծով պարտավորությունը ներկայացնում է այն հաստատված հատուցումների գծով պարտավորությունը, որը հաշվետու ամսաթվի դրությամբ դեռ չի վճարվել:

- Ներկայացված դեռևս չկարգավորված հատուցումների պարտավարություն

Ընկերությունը ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստի ձևավորումը կատարում է երկու մեթոդով՝ դեպք առ դեպք և Հայնեի ստոխաստիկ լոգնորմալ հատուցումների զարգացման մոդելով՝ Բորնհեթթեր-Ֆերգյուսոնի մեթոդի կիրառմամբ: Հայնեի մոդելը ենթադրում է, որ զարգացման գործակիցները (age-to-age) լոգնորմալ են բաշխված: Անկախ լոգնորմալ պատահական մեծությունների արտադրյալը նույնպես լոգնորմալ է, հետևաբար զարգացման գործակիցների արտադրյալները (age-to-ultimate) նույնպես լոգնորմալ են: Քանի որ հաստատունի և լոգնորմալ պատահական մեծության արտադրյալը լոգնորմալ է, այդ դեպքում, եթե ունենք գումարային հատուցումների հարաբերակցությունը ցանկացած ժամանակ (age) և համապատասխան զարգացման գործակցի արտադրյալի գնահատված պարամետրերը, ապա կարող ենք որոշել վերջնական (ultimate) վնասաբերության պարամետրերի գնահատականները: Օգտագործելով այս պարամետրերը՝ կարող ենք գնահատել սպասվող վնասաբերությունը, ինչպես նաև այդ գնահատականի շուրջ վստահության միջակայքերը:

Ընկերությունը դեպք առ դեպք մեթոդի դեպքում իրականացնում է մինչև ՆՉՊՊ-ի հաշվարկման օրը ներկայացված, սակայն մինչև այդ օրը չկարգավորված պահանջների (ներառյալ պահանջների կարգավորման ծախսերի) առանձին-առանձին գնահատում:

- Տեղի ունեցած դեռևս չներկայացված հատուցումների պարտավորություն

Ընկերությունը տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահուստը ձևավորում է երկու մեթոդով՝ Հայնեի ստոխաստիկ լոգնորմալ հատուցումների զարգացման մոդելով՝ Բորնհեթթեր-Ֆերգյուսոնի մեթոդի կիրառմամբ և գործակիցների կիրառման մեթոդով: Վերջինիս համաձայն.

$$ՏՉՊՊ=Գ*(Հ+Պ)$$

Գ – գործակից

Հ – հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և կարգավորման ծախսերի մեծությունն է, իսկ տվյալ ապահովագրության դասի գծով մեկ տարուց քիչ գործունեություն իրականացրած ապահովագրողների դեպքում՝ գործունեության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և կարգավորման ծախսերի մեծությունն է.



Scanned with CamScanner

Դ – ՆՉԴԴ-ի մեծությունն է ՏՉԴԴ-ի հաշվարկման օրվա դրությամբ։

Գ գործակիցը հաշվարկվում է երկու մեթոդաբանությամբ։ Առաջինի համաձայն՝

$$Գ=(Ա_{տ}+Ա_{տ-1}+Ա_{տ-2})/3$$

Իսկ $Ա_{տ}$, $Ա_{տ-1}$, $Ա_{տ-2}$ որոշվում են հետևյալ կերպ.

$Ա_{տ}=Գ_{տ}/Բ_{տ-1}$, $Ա_{տ-1}=Գ_{տ-1}/Բ_{տ-2}$, $Ա_{տ-2}=Գ_{տ-2}/Բ_{տ-3}$,

որտեղ՝

$Բ_{տ-3}$-«տ-3» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ-3» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է.

$Բ_{տ-2}$-«տ-2» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ-2» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է.

$Բ_{տ-1}$-«տ-1» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ-1» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է.

$Գ_{տ-2}$-«տ-2» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ-2» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել «տ-3» տարում, սակայն ներկայացվել են «տ-2» տարում.

$Գ_{տ-1}$-«տ-1» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ-1» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել «տ-2» տարում, սակայն ներկայացվել են «տ-1» տարում.

$Գ_{տ}$-«տ» տարում հաշվեգրված ապահովագրական հատուցումների և «տ» տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ ՆՉԴԴ-ի հանրագումարն է այն ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել «տ-1» տարում, սակայն ներկայացվել են «տ» տարում.

տ-հաշվետու տարի։

Տվյալ ապահովագրության դասի գծով մինչև երկու տարի գործունեություն ծավալած ապահովագրողը Գ-ն հաշվարկում է հետևյալ բանաձևով.

$$Գ=(Ա_{տ}+Ա_{տ-1})/2:$$

Տվյալ ապահովագրության դասի գծով մինչև երկու տարի գործունեություն ծավալած ապահովագրողի համար Գ=0.05։

Այն դեպքում, եթե հաշվարկված Գ գործակիցը փոքր է 0.05-ից, ապա հաշվարկներում օգտագործվում է Գ=0.05 գործակիցը։

Գ գործակցի հաշվարկման երկրորդ մեթոդաբանությամբ Ընկերությունը վերցնում է տվյալ դասով նախորդ 3 տարիների հատուցումներում պատահարների տեղի ունենալու և հայտնման օրերի միջև 31 օրից ավել տարբերություն ունեցող հատուցումների գումարի և նախորդ 3 տարիների հատուցումների գումարի հարաբերակցության և տվյալ դասով նախորդ 3 տարիների հատուցումներում պատահարների տեղի ունենալու և հայտնման օրերի միջև 31 օրից ավել տարբերություն ունեցող հատուցումների քանակի և նախորդ 3 տարիների հատուցումների քանակի հարաբերակցության մեծագույնը։



Scanned with CamScanner

**25.3 Վերաապահովագրություն**

Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կիրառում է վերաապահովագրությունը՝ վերաապահովագրողներին ռիսկ մասնակի փոխանցման միջոցով իր հնարավոր զուտ վնասը սահմանափակելու համար: Վերաապահովագրության համաձայնագրերը չեն ազատում Ընկերությանն ապահովադիրների հանդեպ հանձն առած իր ուղղակի պարտականություններից:

Փոխանցված ապահովագրավճարները և փոխհատուցված օգուտները ներկայացվում են շահույթում կամ վնասում և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ համախառն հիմունքով:

Վերաապահովագրության գծով ակտիվները ներառում են փոխանցված ապահովագրական պարտավորությունների դիմաց վերաապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Վերաապահովագրությունից ստացվելիք գումարները գնահատվում են այն նույն մեթոդով, որը կիրառվում է չվճարված պահանջների պահուստի կամ վերաապահովագրության պայմանագրի հետ կապված կարգավորված պահանջների գնահատման համար:
Ստանձնած վերաապահովագրության գծով ապահովագրավճարները ճանաչվում են որպես հասույթ և հաշվառվում են այնպես, ինչպես կհաշվառվեին, եթե վերաապահովագրությունը համարվեր ուղղակի գործունեություն՝ հաշվի առնելով վերաապահովագրվող բիզնեսի ծառայությունների դասակարգումը: Որպես վերաապահովագրության գծով ակտիվներ հաշվառվում են միայն այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք նախատեսում են նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում: Այն պայմանագրերի գծով իրավունքները, որոնք չեն նախատեսում նշանակալի ապահովագրական ռիսկի փոխանցում, հաշվառվում են որպես ֆինանսական գործիքներ:

**25.4 Հետաձգված ձեռքբերման ծախսումներ**

Ձեռքբերման ծախսումները, որոնք իրենցից ներկայացնում են միջնորդավճարներ, որոնք փոփոխվում կամ վճարվում են ապահովագրության պայմանագրերի ձեռքբերման կամ վերանայման հետ կապված, հետաձգվում ու ամորտիզացվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում Ընկերությունը վաստակում է համապատասխան ապահովագրավճարները: Հետաձգված ձեռքբերման ծախսումները հաշվարկվում են առանձին՝ գործունեության յուրաքանչյուր տեսակի համար և վերանայվում են գործունեության տեսակի համար պայմանագիրը կնքելիս և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ հավաստիանալու համար, որ ենթակա են փոխհատուցման հիմք ընդունելով ապագա գնահատումները:

**25.5 Պարտավորությունների համարժեքության ստուգում**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ իրականացվում է պարտավորությունների համարժեքության ստուգում, որոշելու համար, թե արդյոք ապահովագրության պայմանագրերի պահուստները (հանած հետաձգված ձեռքբերման ծախսումները, վարչական և պահանջների կարգավորման ծախսերը) համարժեք են: Այս ստուգումներն իրականացնելիս օգտագործվում են ապագա պայմանագրային դրամական հոսքերի և հարակից ծախսերի, այդ թվում՝ պահանջների մարման ծախսերի, ապահովագրության պայմանագրերի պահուստներն ապահովող ակտիվներից ստացված ներդրումների գծով եկամտի ներկայիս լավագույն գնահատումները: Պակասորդի բացահայտման դեպքում, համապատասխան հետաձգված ձեռքբերման ծախսումները և համապատասխան ոչ նյութական ակտիվներն արժեզրկվում են, իսկ անհրաժեշտության դեպքում, ձևավորվում է լրացուցիչ պահուստ: Պակասորդը ճանաչվում է հաշվետու տարվա շահույթում կամ վնասում: Ստուգումն իրականացվում է ընդհանուր պորտֆելի հիմունքով:



Scanned with CamScanner

**25.6 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերությունը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարում կանխիկ դրամական միջոցները, ընթացիկ հաշիվների մնացորդները և ցպահանջ ավանդները:

**25.7 Ֆինանսական գործիքներ**

***(i) Դասակարգում***

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ այն ածանցյալ գործիքի, որը նախորոշված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախորոշվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախորոշում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախորոշումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևափոխում է դրամական հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

***(ii) Ճանաչում***

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական գործիքների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

***(iii) Չափում***

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:



Scanned with CamScanner

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### *(iv) Իրական արժեքի չափման սկզբունքներ*

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիս բացակայության դեպքում, այն ամենաբարենպաստ շուկայում, որտեղ Ընկերությունը հնարավորություն ունի մուտք գործել նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին նման հանգամանքներում:
Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում ակտիվ շուկայում նմանատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով, իսկ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգվում է: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն միայն մինչև այն պահը, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:



Scanned with CamScanner

Ակտիվները և երկար դիրքերը չափվում են առաջարկի գնով, պարտավորությունները և կարճ դիրքերը՝ պահանջարկի գնով: Այն դեպքում, երբ Ընկերությունը ունի դիրքեր ռիսկերի հաշվանցմամբ, ռիսկերի դիրքերի հաշվանցման չափման նպատակով օգտագործվում է միջին շուկայական գինը, և պահանջարկի կամ առաջարկի գների գծով ճշգրտումները կատարվում են միայն զուտ բաց դիրքերի հետ կապված՝ ըստ անհրաժեշտության: Իրական արժեքն արտացոլում է գործիքի պարտքային ռիսկը և ներառում է ճշգրտումներ Ընկերության և պայմանագրային կողմի պարտքային ռիսկը հաշվի առնելու նպատակով՝ ըստ անհրաժեշտության: Մոդելների կիրառումից ստացվող իրական արժեքի գնահատումները ճշգրտվում են այլ գործոնների, այդ թվում՝ իրացվելիության ռիսկը կամ մոդելի անորոշությունների տեսանկյունից, այնքանով որքանով Ընկերությունը համարում է, որ շուկայի երրորդ կողմ հանդիսացող մասնակիցը դրանք հաշվի կառնի գործարքի գինը որոշելիս:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև շարժերն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են փոփոխությունները:

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների կատարման ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը:

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար ակտիվ շուկայում գնանշվող գները (չճշգրտված):

- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր ելակետային տվյալներ, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել է հետևյալը՝ գնանշվող գները նմանատիպ գործիքների համար ակտիվ շուկայում, գնանշվող գները նույն կամ նմանատիպ գործիքների համար ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնք գնահատվում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալներից ելնելով, իսկ ոչ դիտելի ելակետային տվյալներն էական ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշվող գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու նպատակով:

*(v) Հետագա չափման արդյունքում առաջացած օգուտ և կորուստ*

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:



Scanned with CamScanner

*(vi) Ապաճանաչում*

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվում մասնակցությունը, որն առաջացել կամ պահպանվել է Ընկերության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

**25.8 Հիմնական միջոցներ**

*(i) Ճանաչում և չափում*

Հիմնական միջոցները ճանաչվում են սկզբնական արժեքով:
Սկզբնական արժեքը ներառում է ձեռք բերման գինը, այդ թվում՝ ներմուծման տուրքերը և գնման չփոխհատուցվող հարկերն ու այլ ուղղակիորեն վերագրելի ծախսերը, որոնք անհրաժեշտ են այդ ակտիվները աշխատանքային վիճակի բերելու և նրանց նպատակային օգտագործման վայր տեղափոխելու համար:

Սկզբնական չափումից հետո Ընկերությունը հիմնական միջոցների բոլոր դասերի համար ընտրել է սկզբնական արժեքի մոդելը, բացառությամբ «Շենքեր» դասը, որը հաշվառվում է վերագնահատման մոդելով:

**Սկզբնական արժեքի մոդել**

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

**Վերագնահատման մոդել**

Հիմնական միջոցի միավորը, որի իրական արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել, որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է դրա իրական արժեքը վերագնահատման ամսաթվի դրությամբ՝ հանած համապատասխան կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Վերագնահատումները կատարվում են այնպիսի պարբերականությամբ, որպեսզի հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ իրական արժեքից:

Երբ հիմնական միջոցի միավորը վերագնահատվում է, այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է վերագնահատված արժեքով:

Վերագնահատման ամսաթվի դրությամբ ակտիվը հաշվառվում է հետևյալ ձևերից որևէ մեկով՝



Scanned with CamScanner

ա) համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատման արդյունքներին համապատասխան: Վերագնահատման ամսաթվի դրությամբ կուտակված մաշվածությունը ճշգրտվում է այնպես, որ այն հավասար լինի ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի և հաշվեկշռային արժեքի միջև եղած տարբերությանը՝ արժեզրկումից կուտակված կորուստները հաշվի առնելուց հետո, կամ

բ) կուտակված մաշվածությունը նվազեցվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքից:
Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճն ուղղակիորեն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և կուտակվում սեփական կապիտալի «վերագնահատման պահուստ» հոդվածում:

Այնուամենայնիվ, եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվների նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում նախկինում ճանաչված նվազման չափով:

Եթե ակտիվների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, նվազումը պետք է ճանաչվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում այն գումարի չափով, որը չի գերազանցում այդ ակտիվների գծով նախկինում վերագնահատումից արժեքի աճի առկա կրեդիտային մնացորդը: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված նվազումը պակասեցնում է սեփական կապիտալի վերագնահատումից արժեքի աճի հոդվածում կուտակված գումարը:

### *(ii) Մաշվածություն*

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

| | Օգտակար ծառայության ժամկետ |
|---|---|
| Շենքեր | 40 տարի |
| Գրասենյակային սարքավորումներ | 3-5 տարի |
| Կապի սարքավորումներ և համակարգիչներ | 3-5 տարի |
| Փոխադրամիջոցներ | 5 տարի |
| Վարձակալված գույքի կապիտալ բարելավումներ | 20 տարի |

### Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 10 տարի:



Scanned with CamScanner

**25.9 Պահուստներ**

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք։ Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը։

**25.10 Բաժնետիրական կապիտալ**

***(i) Սովորական բաժնետոմսեր***

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ։ Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների։

***(ii) Արտոնյալ բաժնետոմսեր***

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ, եթե ենթակա չեն հետգնման կամ ենթակա են հետգնման Ընկերության որոշմամբ, և շահաբաժինները վճարվում են հայեցողական կարգով։ Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես բաշխումներ սեփական կապիտալի կազմում՝ Ընկերության բաժնետերերի հաստատումից հետո։

Արտոնյալ բաժնետոմսերը դասակարգվում են որպես պարտավորություն, եթե ենթակա է հետ գնման որոշակի նշված ամսաթվին կամ ըստ բաժնետերերի որոշման, կամ եթե շահաբաժինները վճարվում են ոչ հայեցողական կարգով։ Այդ դեպքում շահաբաժինները ճանաչվում են որպես տոկոսային ծախս շահույթում կամ վնասում՝ հաշվեգրվելուն պես։

***(iii) Բաժնետիրական կապիտալի հետ գնում***

Երբ որպես սեփական կապիտալ ճանաչված բաժնետիրական կապիտալը հետ է գնվում, վճարվող հատուցման գումարը, ներառյալ՝ ուղղակիորեն վերագրելի ծախսումները, ճանաչվում է որպես սեփական կապիտալի նվազեցում։

***(iv) Շահաբաժիններ***

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու Ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնակարգերով։

Սովորական բաժնետոմսերի գծով շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են։



Scanned with CamScanner

**25.11 Հարկում**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերվում է սեփական կապիտալում ճանաչված տարրերին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող շահույթի գծով վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է կիրառելով հաշվապահական հաշվեկշռի պարտավորության մեթոդը ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկի չափումն արտացոլում է այն այն եղանակը, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները:

**25.12 Տոկոսային եկամուտ և ծախսեր, միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ**

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում հաշվեգրվելու ժամանակ՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող դրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելավճարի ամորտիզացիան կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ամսաթվի դրությամբ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված գործիքի գումարի միջև այլ տարբերությունները:

Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

**25.13 ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»***

ՖՀՄՍ 9-ը սահմանում է ֆինանսական ակտիվների, ֆինանսական պարտավորությունների և ոչ ֆինանսական միավորների առք ու վաճառքի որոշ պայմանագրերի ճանաչման և չափման պահանջները: Այս ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»:

***(i) Դասակարգում. Ֆինանսական ակտիվներ***

ՖՀՄՍ 9-ով նախատեսում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման նոր մոտեցում, որն արտացոլում է այն բիզնես մոդելը, որի շրջանակներում կառավարվում են ակտիվները, և պայմանագրային դրամական հոսքերի այդ ակտիվին վերաբերող բնութագրերը:



Scanned with CamScanner

ՖՀՄՍ 9-ը ներառում է ֆինանսական ակտիվների երեք հիմնական դաս՝ ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ: ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ այլևս չեն գործում ՀՀՄՍ 39-ով սահմանված մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվների, փոխառությունների և դեբիտորական պարտքերի և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների դասերը:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Առևտրական նպատակով չպահվող բաժնային գործիքում ներդրման սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելի ընտրություն կատարել՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ներկայացնելու իրական արժեքի հետագա փոփոխությունները: Այս ընտրությունը կատարվում է առանձին՝ յուրաքանչյուր ներդրման համար:

Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք դասակարգված չեն որպես ամորտիզացված արժեքով չափվող և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող, դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այլապես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կնվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է այս դասերից մեկին սկզբնական ճանաչման պահին:

### 25.14 Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը պորտֆելի մակարդակով գնահատում է այն բիզնես մոդելի նպատակը, որի շրջանակում պահվում է ակտիվը, քանի որ այս գնահատումը լավագույնս արտացոլում է գործունեությունը կառավարելու և ղեկավարությանը տեղեկատվություն տրամադրելու եղանակը: Այդ դեպքում դիտարկվում է հետևյալ տեղեկատվությունը.



Scanned with CamScanner

- պորտֆելի համար սահմանված քաղաքականությունը և նպատակները և այդ քաղաքականության աշխատանքը գործնականում: Մասնավորապես, արդյոք ղեկավարության ռազմավարության նպատակն է ապահովել պայմանագրով նախատեսված տոկոսային եկամտի ստացումը, ապահովել որոշակի տոկոսային եկամտաբերության մակարդակը, համապատասխանեցնել ֆինանսական ակտիվների ժամկետներն այն պարտավորությունների ժամկետներին, որոնք ֆինանսավորվում են այդ ակտիվներով, կամ դրամական միջոցների ակնկալվող արտահոսքին, կամ իրացնել դրամական հոսքերն ակտիվների վաճառքի միջոցով:
- ինչպես է գնահատվում պորտֆելի կատարողականը և ինչպես է այդ տեղեկատվությունը հաղորդվում Ընկերության ղեկավարությանը:
- բիզնես մոդելի (և այդ բիզնես մոդելում պահվող ֆինանսական ակտիվների) վրա ազդող ռիսկերը և այդ ռիսկերի կառավարման եղանակը:
- ինչպես են վարձատրվում բիզնեսի ղեկավարները, օրինակ՝ արդյոք վարձատրությունը հիմնված է կառավարվող ֆինանսական ակտիվների իրական արժեքի, թե՝ հավաքված դրամական հոսքերի վրա:
- նախորդ ժամանակաշրջաններում վաճառքների հաճախականությունը, ծավալը և ժամկետները, այդ վաճառքների պատճառները և ապագա վաճառքների հետ կապված ակնկալիքները: Այնուամենայնիվ, վաճառքների ծավալի վերաբերյալ տեղեկատվությունը առանձին չի դիտարկվում, այն դիտարկվում է իրականացնելիս ընդհանուր վերլուծություն, թե ինչպես են իրագործվում ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության առաջադրված նպատակները և ինչպես են իրացվում դրամական հոսքերը:

Առևտրական նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական ակտիվները, որոնք կառավարվում են և որոնց արդյունավետությունը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, չափվում են իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, քանի որ չեն պահվում ոչ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և ոչ էլ՝ թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու համար:

**Գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ**

Այս գնահատման նպատակների համար «մայր գումարը» սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք սկզբնական ճանաչման պահին: «Տոկոսը» բաղկացած է փողի ժամանակային արժեքի և որոշակի ժամանակահատվածում չմարված մայր գումարի հետ կապված պարտքային ռիսկի և փոխատվության հետ առնչվող այլ հիմնական ռիսկերի և ծախսերի (օրինակ՝ իրացվելիության ռիսկի և վարչական ծախսերի) համար փոխհատուցումից, ինչպես նաև շահույթի մարժայից:

Գնահատելիս, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ, Ընկերությունը դիտարկում է գործիքի պայմանագրային պայմանները: Այս դեպքում գնահատվում է, թե արդյոք ֆինանսական ակտիվը պարունակում է այնպիսի պայմանագրային պայման, որը կարող է այնպես փոխել պայմանագրային դրամական հոսքերի ժամկետները կամ գումարը, որ ֆինանսական ակտիվը չբավարարի այդ պայմանը:

Այս գնահատումն իրականացնելիս Ընկերությունը դիտարկում է հետևյալը.
- պայմանական դեպքերը, որոնք կարող են փոխել դրամական հոսքերի գումարը կամ ժամկետները,
- լծակավորման հատկանիշը,
- վաղաժամ մարման և ժամկետի երկարաձգման պայմանները,
- պայմանները, որոնք սահմանափակում են Ընկերության պահանջը որոշակի ակտիվներից առաջացող դրամական հոսքերով (օրինակ՝ առանց ռեգրեսի իրավունքի ֆինանսական ակտիվ),
- հատկանիշները, որոնք փոփոխում են փողի ժամանակային արժեքի համար հատուցումը, օրինակ՝ տոկոսադրույքների պարբերաբար վերասահմանումը:



Scanned with CamScanner

*(ii) Արժեզրկում. Ֆինանսական ակտիվներ և պայմանագրային ակտիվներ*

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ով սահմանված «կրած կորուստներ» մոդելը «ակնկալվող պարտքային կորուստների» մոդելով: Նոր մոդելի կիրառումը պահանջում է էական դատողություններ այն մասին, թե ինչպես են տնտեսական գործոններն ազդում «ակնկալվող պարտքային կորուստների վրա, որը որոշվում է հավանականությամբ կշռված լինելու հիմունքով:

Արժեզրկման նոր մոդելը կիրառվում է ամորտիզացված արժեքով չափվող կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների նկատմամբ, բացառությամբ բաժնային գործիքներում ներդրումների, ինչպես նաև պայմանագրի գծով ակտիվների նկատմամբ: Ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի նկատմամբ չեն կիրառվում ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջերը:

ՖՀՄՍ 9-ի համաձայն՝ կորստի պահուստը չափվում է հետևյալ հիմունքներից որևէ մեկով.
- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ. որոնք իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից և
- ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, այն ակնկալվող պարտքային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափումը կիրառվում է այն դեպքում, երբ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկն նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր: Հակառակ դեպքում չափվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը կարող է որոշել, որ ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել, եթե ակտիվն ունի ցածր պարտքային ռիսկ հաշվետու ամսաթվի դրությամբ: Այնուամենայնիվ, ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների չափումը միշտ կիրառվում է առևտրական դեբիտորական պարտքերի և նշանակալի ֆինանսավորման բաղադրիչ չպարունակող պայմանագրի գծով ակտիվների համար:
ՖՀՄՍ 9-ի արժեզրկման պահանջները պահանջում են ղեկավարության դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, մասնավորապես հետևյալ ոլորտներում, որոնք մանրամասն ներկայացված են ստորև.

- գնահատում, թե արդյոք տեղի է ունեցել գործիքի գծով պարտքային ռիսկնի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր,
- ապագայամետ տեղեկատվության ներառում ակնկալվող պարտքային կորուստների չափման մեջ:

*(iii) Դասակարգում - Ֆինանսական պարտավորություններ*

ՖՀՄՍ 9-ը զգալի չափով պահպանում է ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական պարտավորությունների դասակարգման պահանջները:

Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 39-ի համաձայն՝ այն ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի բոլոր փոփոխությունները, որոնք նախատորոշվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ճանաչվում են շահույթում կամ վնասում, մինչդեռ ՖՀՄՍ 9-ի համաձայն, իրական արժեքի այս փոփոխություններն որպես կանոն ներկայացվում են հետևյալ կերպ.



Scanned with CamScanner

- պարտավորության գծով պարտքային ռիսկի փոփոխություններին վերագրելի իրական արժեքի փոփոխության գումարը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում, իսկ
- իրական արժեքի փոփոխության մնացած գումարը ներկայացվում է շահույթի կամ վնասի կազմում:

Ընկերությունը չի դասակարգել որևէ ֆինանսական պարտավորություն շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող գործիքների դասին և չունի նման մտադրություն ներկա պահին:

*(iv) Բացահայտումներ*

ՖՀՄՍ 9-ի համաձայն պահանջում է մանրամասն նոր բացահայտումներ հատկապես պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորուստների հետ կապված: Գնահատման ընթացքում Ընկերությունը կատարել է վերլուծություն նպատակ ունենալով բացահայտել բացակայող տեղեկատվությունը:



Scanned with CamScanner